

ԿՈՒՍԱՇԽԱՏՈՂԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԿՈՒՍԱՇԽԱՏ

1933

ՅԵՐԵՎԱՆ

22 NOV 2017 81

ԿՈՒՍԱՇԽԱՏՈՂԻ
ՏԵՂԵԿԱՏՈՒ



ԿՈՒՍԱՇԽԱՏ

1933

ՏԵՂԵԿԱՆ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ - ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ,
ԴԱՍՏԻԱՐԱԿԱՆ ՅԵՎ ՄԱՍՍԱՑԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

(ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՅԵՎ, ԿՎՀ 2-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ)

Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի և ԿՎՀ-ի միացյալ
պլենումին արձանագրում է, Վոլ Զամյ(բ)Կ-ի Կենտկոմի
1931 թ. հոկտ. 31-ի վորոշումից և Հայաստանի Կոմ-
կուսի 8-րդ համագումարից հետո Հայաստանի Կոմ-
կուսի կազմակերպությունները վորոշ հաջողություն-
ներ են ձեռք բերել կուսակցական աշխատանքի աս-
պարիզում:

Այդ նվաճումներն արտահայտվեցին կուսակցական
շարքերի թե քանակական և թե վորակական աճամբը:
1931 թ. ընթացքում կուսակազմակերպությունն
աճեց 6.201 հոգով, իսկ 1932 թ. առաջին յեռամսյա-
կում՝ 1.152 հոգով:

ՀԿ(բ)Կ-ի Կենտկոմի կիրառած ձեռնարկումները
նկատելիորեն աշխուժացրին կուսակցական-կազմա-
կերպչական, դաստիարակչական և մասսայական-քա-
ղաքական աշխատանքը: Շատ կազմակերպություններ
(Անիսյան, Ալահվերդի, Յերևան, Արթիկ և այլն)
զգալի չափով դարձրին իրենց յերեսը դեպի կուսակցա-
կան-մասսայական աշխատանքը: Հիմնականում ավարտ-
վեց թեխերում, բրիգադներում, հերթափոխությունե-



1-317194

րում և այլն ստորին կուսողակը ձևակերպելու աշխատանքը: (1931 թ. հոկտեմբերի մեկին Հայաստանի արդյունաբերական ձեռնարկություններում, տրանսպորտում և շինարարության մեջ կար 193 բլիշ, 438 կուսկազմակերպիչ և կուսխմբակ, ներկայումս կա 273 բլիշ, 479 կուսխմբակ և 859 կուսկազմակերպիչ): Կուսակցական կազմակերպություններն սկսեցին ավելի շատ զբաղվել կուսակցական ուժերի բաշխման հարցերով, արտադրության մեջ կոմունիստների կատարած առաջադաս դերի ստուգմամբ և կուսակցական որվա նախապատրաստմամբ: Հիմնականում ուղղվել են գյուղում կուսաշխատանքի հենակետներ կազմակերպելու ասպարիզում կատարված սխալները, վերակառուցվել են գյուղական բլիշներն ըստ արտադրական սկզբունքի և ընդարձակվել և կոլտնտեսական բլիշների ցանցը: Մենք ունենք 45 հենակետային բլիշ, 360 կոլտնտեսական բլիշ, 35 խորհրդատեսական և ՄՏԿ-ներում 7-ը բլիշ՝ 404 կուսխմբակներով և 1.653 կուսկազմակերպիչներով: Շատ կազմակերպություններում սկսել են ավելի մեծ ուշադրություն նվիրել բլիշների, կուսխմբակների, կուսկազմակերպիչների հրահանգմանը, հրավիրելով հատուկ խորհրդակցություններ, հավաքներ, կոնֆերանսներ և այլն (Լենինական, Յերևան, Ալլահվերդի, Ղափան և այլն): Վերջին չերեք ամիսներում կուսակցության Կենտկոմը ձեռնարկություններն ու գյուղերն և ուղարկել 59 կուսխմբակներ, վորոնցից 36-ը կուսակցական-մասսայական աշխատանքն ուժեղացնելու, 9 կուսխմբակ՝ կուսակցական շարքերին մարքսիստական-լենինյան դաստիարակություն տալու գործին ոգնելու համար:

Վերջին շրջանում վորոշ չափով ուժեղացել և թե քաղաքում և թե գյուղում կուսակցության անդամներին և թեկնածուներին մարքսիստական-լենինյան դաստիարակություն տալու աշխատանքը, կուսակցական ակտիվի նախապատրաստումն ու վերապատրաստումը (Հայաստանում գոյություն ունեն 388 կուսգյուղ և խմբակ՝ 12.798 ունկնդիրներով, 2 կոմհամալսարան՝ 180 ունկնդիրներով, 4 շրջանային կուսգյուղ՝ 353 ունկնդիրներով, Ծաղկաձորի դասընթացները՝ 306 ունկնդիրներով: Միամսյա դասընթացներն են ավարտել 9 շրջանում 275 գյուղբլիշների քարտուղարներ և 3-որյա սեմինար են անցել Լենինականի, Յերևանի, Ալլահվերդու և այլ արտադրական բլիշների կուսկազմակերպիչներն ու կուսակցական խմբակներ կազմակերպիչները):

ՀամԿ(բ)Կ-ի Կենտկոմի հոկտեմբերի 31-ի վորոշումների իրականացման հիման վրա կուսկազմակերպություններն սկսել են աշխատել ավելի լավ և ել ավելի լեն ամրացրել իրենց կապը մասսաների հետ: ՀԿ(բ)Կ-ի 8-րդ համագումարից հետո անցած ժամանակաշրջանը բնորոշվում և նրանով, վոր ուժեղացել և կուսկազմակերպությունների պայքարն իրենց շարքերի միասնության և համախմբվածության համար կուսակցության հիմնական գծի շուրջը, մասնավոր գյուղացիական հարցում կատարված սխալներն ուղղելու համար, ուժեղացել և պայքարն առանձին բլիշների իդեոլոգիական անկախությունից և հակակուսակցական վարքագծի դեմ, ուժեղացել և կուսակցական կարգապահության համար մղվող պայքարը:

Վերոհիշյալ նվաճումների հետ միասին կուսկազմակերպությունների աշխատանքում մինչև այժմ ել

կան խոշորագույն թերություններ, վորոնցից հիմնականները ՀԿ(Բ)-ի կենտկոմի և ԿՎՀ-ի պլենումը համարում և հետևյալները.

1. Մի շարք կազմակերպություններում դեռևս շարունակում են թերազնաբանել անմիջական կուսակցական աշխատանքը (Ղուրդուղուլի, Ղամաբլու, Մեղրի, Աղբաբա), դանդաղ և վերակառուցման տեմպը, բավականաչափ ուշադրություն չեն նվիրում աշխատանքի վորակին ու բովանդակությանը, թերազնահատում են միջին և ստորին կուսուղակի ամրացման կարևորագույն նշանակությունը:

2. Բջիջներն իրենց աշխատանքով դեռևս չեն ընդգրկում բոլոր բանվորներին, իսկ կուսակազմակերպության մեջ՝ բոլոր կոմունիստներին, մասնավորապես բավականաչափ աշխատանք չեն կատարում՝ բարձրացնելու արտադրություն չեկած նոր բանվորների կուսուղական ու քաղաքական մակարդակը:

3. Շատ բջիջների աշխատանքում գոյություն ունեն միայն ընթացիկ տնտեսական աշխատանքներով զբաղվելու և վարչությունն իրենցով փոխարինելու չերվուլթներ (մեքենատրակտորային կայաններում, խորհտնտեսություններում, չերկաթուղային արանսպորտում և այլն):

4. Մինչև այժմ անբավարար վիճակի մեջ են գտնվում կուսակցական որվա նախապատրաստման աշխատանքը, կուսպարտականությունների բաշխումը, կուսակցության թեկնածուների և ռեզերվների մեջ կատարվող աշխատանքը, բանվորներին հետաքրքրող սուր հարցերի շուրջը տարվող մասսայական բացատրական աշխատանքը:

5. Մինչև այժմ ել միանգամայն անբավարար և կոմունիստների, մասնավորապես գյուղական կազմակերպությունների ընդգրկումը կուսուղակության ցանցում, դեռևս չի իրացվել ՀամԿ(Բ) կենտկոմի վորոշումը՝ կուսուղակում ամբողջ գյուղական կազմակերպությունն ընդգրկելու մասին: Դիչ ոգնություն և ցուցց տրվում բանվոր պրոպագանդիստին, ցածր և մարքսիստական-լենինյան պրոպագանդի վորակը, չկան հերթափոխություն դպրոցներ և խմբակներ, ժամանակին թարմ գրականություն չի հայթայթվում ստորին ողակին, թույլ հիմքերի վրա չե դրված անհատական և խմբակային ագիտացիայի կազմակերպումը:

6. Գյուղը մինչև այժմ ել մնում և վորպես կուսակցական աշխատանքի ամենաթույլ բնագավառը: Դեռևս նկատվում են հակակուսակցական ուժերի վրա գրորվելու, բջիջների խորթ տարբերով խճողված լինելու և ինքնաքննադատությունը ճնշելու առանձին փաստեր գյուղական կազմակերպություններում (Ախտայի շրջան), չափազանց թույլ և չքավոր ու միջակ գյուղացիական մասսաների մեջ կատարվող աշխատանքը:

Վերոհիշյալի հիման վրա կենտկոմի և ԿՎՀ-ի միացյալ պլենումը գտնում և, վոր կուսաշխատանքի վիճակը դեռ հեռու չե մեր զարգացման ներկա շրջանի պահանջներին համապատասխանելուց:

Մեր զարգացման ներկա շրջանը պահանջում և կուսակցական կազմակերպություններից ավելի մեծ համախմբվածություն և կոփվածություն այն պայքարում, վոր մղվում և կուսակցության հիմնական գծի համար, տվյալ ետապի գլխավոր վտանգ աջ թեքման, ինչպես և «ձախ» խոտորումների և նրանց հանդեպ

ցուցաբերվող հաշտվողականութեան դեմ, ներխուժ լի-
բերալիզմի, մեծապետական շովինիզմի ու տեղական
նացիրոնալիզմի դեմ:

Կուսակցական-կաղմակերպչական, դաստիարակչա-
կան և մասսայական-քաղաքական աշխատանքը պատ-
շաճ բարձրութեան վրա դնելու նպատակով Կենտկոմի
և ԿՎՀ-ի պլենումը վորոշում եւ:

1. Ընկեր Ստալինի պատմական վեց պայմանները
և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1931 թվի հոկտեմբերի 31-ի
վորոշումները գործնականորեն մինչև վերջն իրակա-
նացնելու խնդիրը պետք ե գտնվի Հայաստանի բոլոր
կուսակազմակերպութիւնների ուղադրութեան կենտրո-
նում: Անհրաժեշտ ե վերականգնել և ծավալել կուսակ-
ցական-մասսայական աշխատանքն աշխատեալ, վոր հնա-
րավոր լինի քաղաքական ազդեցութեամբ և բալլշի-
կյան ներգործմամբ ընդգրկել բոլոր բանվորներին:
Անհրաժեշտ ե աշխուժացնելով բանվորներին և կուլտն-
տեսականներին ամենալայն խավերի մեջ կուսկազմա-
կերպութիւնների աշխատանքը, բարձրացնել նրանց
մարտունակութիւնը, ասպարեզ բանալ նրանց արտա-
դրական ու քաղաքական ակտիվութեան համար: Հսկա-
յական նշանակութիւն ե ստանում կուսակցութեան
յուրաքանչյուր անդամի և մանավանդ թեկնածուի հետ
կատարվող աշխատանքը: Կուսակցական որդաններն
անպայման պետք ե ձանաչեն տվյալ կուսկուլեկտիվի
յուրաքանչյուր անդամին, պետք ե ճիշտ կազմակեր-
պեն կուսակցութեան անդամի, մանավանդ թեկնածուի
քաղաքական մակարդակի բարձրացման գործը՝ ճիշտ
բաշխելով կուսակցական պարտականութիւնները, ոգ-
նեն յուրաքանչյուր կոմունիստի հետագա բալլշիկաց-

մանը, միջոցներ ձեռք առնելով, վոր կուսակցութեան
յուրաքանչյուր անդամը կամ թեկնածուն, յուրացնելով
կուսակցութեան քաղաքականութիւնն ու նրա ձեռ-
նարկումները, առաջավոր և որինակելի լինի արտա-
դրութեան մեջ և հասարակական ու քաղաքական
կյանքում: Անհրաժեշտ ե շարունակել արտադրութեան
մեջ և հասարակական-քաղաքական կյանքում կոմու-
նիստների կատարած ավանգարդային դերի ստուգումը,
սիստեմատիկ բնույթ տալով այդ աշխատանքին:

2. Անհրաժեշտ ե առավելագույն ուղադրութիւն
նվիրել ցեխում աշխատանքն ուժեղացնելու գործին,
ցեխը շիջի, նրա բլուրցի աշխատանքի ամրացմանը,
ցեխային ժողովների բովանդակութեան բարձրացմանը,
ցեխը շիջի դերի բարձրացմանը՝ ցեխում կուսակցական-
քաղաքական կյանքի դեկավարման ասպարեզում:

3. Ուժեղացնելով և ամրացնելով կուսակցական
դեկավարութիւնը ձեռնարկութեան ու գլուղի կյանքի
բոլոր ասպարեզներում, կազմակերպելով և գլխավորե-
լով մասսաների պայքարը կուսակցութեան դիրեկտիվ-
ները կատարելու համար, կուսակցական կազմակեր-
պութիւնները վոր մի դեպքում չպետք ե փոխարինեն
տնտեսավարին, վարչութեանը և գործարկումին: Նրանք
չպետք ե ծանրաբեռնեն իրենց տնտեսական մանրուք-
ներով և պարտավոր են ըստ ամենալայն ամրացնել
միանձնյա դեկավարութիւնը:

«Կուսը շիջնեը, հանդիսանալով կուսակցութեան
հիմքը, մանավանդ ձեռնարկութիւններում, իրենց
աշխատանքում պետք ե դեկավարեն ձեռնարկութեան
հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքն
այնպես, վոր ապահովեն կուսակցութեան հիմնական

գիրեկտիվների կատարումն արհմիութենական ու տնտեսական որդանների կողմից, ընդամին առանց խառնվելու գործարկումի ու գիրեկտորի աշխատանքի մասնաճանապարհություններին, մասնավորապես վարչութչան ուղեւրատիւ կարգադրութչուններին» (ՀամԿ(Բ)Կ-ի Կենտկոմի 1929 թ. սեպտեմբերի 5-ի գիրեկտիվից)։

4. Կենտկոմի և ԿՎՀ-ի պլենումը շրջկոմների, կուսկոմների և բժիշկների կարևորագույն խնդիրն է համարում մասսայական ագիտացիան, գաղափարական քաղաքական աշխատանքն ավելի բարձր ազդեցական հասցնելը։

Դաստիարակել, համոզել, կոնկրետ և հստակ ագիտացիա մղել, համընթացումը բացատրել մասսային հուզող հարցերը, մեր միջազգային դրութչունը, մեր աճման դժվարութչունները, ագիտացիա մղել՝ կազմակերպելու համար— ահա ագիտացիայի այն հիմունքները, վորոնցից յեկնելով պետք է համառ աշխատանք ծավալել մասսաներին սոցիալիստական դաստիարակութչուն տալու համար։

Կուսակցութչան գիրեկտիվների և լոզունգների շուրջը կատարվող ամբողջ ագիտացիոն աշխատանքն անհրաժեշտ է կառուցել այնպես, վոր ըստ հնարավորութչան ավելի խորը ծավալել մասսաների մեջ յերկրի և տվյալ ձեռնարկութչան, կոլտնտեսութչան, խորհրտնտեսութչան, ՄՏԿ-ի և այլն քաղաքական ու տնտեսական կյանքի կարևորագույն հարցերը, վորպեսզի ագիտմասսայական աշխատանքն ամենալավ ձևով շարկապված լինի բանվորների կուլտուրական քաղաքական և նյութական-կենցաղային պահանջների հետ։ Անհրաժեշտ է հատուկ ուշադրութչուն նվիրել բանվորական

ժողովների, միտինգների, գրուչյների, թերթերի ընթերցանութչան և այլն յեկտվիվների նախապատրաստման հարցերին։

Մասսայական ագիտացիայի ամբողջ աշխատանքը բարելավելու նպատակով Կենտրոնական Կոմիտեյի և Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի պլենումը հանձնարարում է Կենտրոնական Կոմիտեյի բյուրոյին՝ կոնկրետ ձեռնարկումներ մշակել պատրաստելու և նախապատրաստելու համար ագիտատորներ, պրոպագանդիստներ, բարելավելու ագիտիչեկտիվների աշխատանքը, ագիտացիայի վորակը և հրատարակելու համապատասխան գրականութչուն։

5. Սահմանված միասնական կուսակցական ուղեպետք է կարևորագույն լծակ դառնա կոմունիստների հետագա գաղափարական քաղաքական կոմման գործում։ Նա պետք է դառնա ներկուսակցական դեմոկրատիայի և բայլեկիկան ինքնաքննադատութչան ծախվման կարևորագույն գործոնը։ Ուստի անհրաժեշտ է խնամքով կազմակերպել և պատրաստել կուսժողովները, ապահովել զեկուցողների վորակն ու պատրաստութչունը, վորպեսզի ժողովներում քննարկվելիք հարցերը հասցված լինեն սկզբունքային քաղաքական բարձրութչան, վորպեսզի ապահովվի կուսակցութչան բոլոր անդամների ու թեկնածուների ակտիվ մասնակցութչունը հարցերի քննարկմանը։

6. Պլենումը հանձնարարում է Կենտկոմի բյուրոյին և բոլոր շրջկոմներին՝ հատկապես զբաղվել գյուղի կուսկազմակերպութչան վերակառուցման ու ամրացման հարցով։ Ծաղկունքի բժիշկի (Ախտա) գործը մի անգամ ևս ազդարարում է առանձին բժիշկների քայքայման

մասին, շատ գլուղեբույսեր և առանձին շրջաններում կուսակցության գծի խեղաթյուրման փաստերի գոյություն մասին, վորոնք պահանջում են բարելավել շրջանային ղեկավարությունը և հատուկ ուշադրություն նվիրել գյուղական կազմակերպություններին, պարտավորեցնել արդյունաբերական ձեռնարկություններին և չեղաթուրող կուսակազմակերպություններին կոնկրետ ոգնություն կազմակերպել գյուղական բջիջներին՝ կուսաշխատանքը վերակառուցելու և ստորին կուստղակն ամրացնելու գործում: Կուսակցական ուժերը գլուղում ճիշտ բաշխելու և կոլտնտեսություններում ստորին կուստղակ ստեղծելու խնդիրը պետք է կազմի գյուղական կուսկազմակերպությունների ուշադրության կենտրոնը:

Կուսակցության շրջանային կոմիտեներին՝ հատուկ ուշադրություն նվիրել խորհրդատեսությունների և ՄՏԿ-ների կուսբջիջների աշխատանքին, ամենամոտ ժամանակում ըստ ամենացնի ամրացնել այդ բջիջները, դարձնելով դրանք գլուղի կուսաշխատանքի իրական հենակետները:

Գյուղական կուսկազմակերպությունների աշխատանքի հիմնական թերություններից մեկն է ֆուլում գեուկա չքավորների, աշխատավոր անհատական գլուղացիների մեջ կատարվող թույլ աշխատանքը և մանավանդ աղգային փոքրամասնությունների ու աշխատավոր կանանց մեջ կատարվող կուսակցական-մասսայական աշխատանքը: Պլենումը հանձնարարում է Կենտկոմի բյուրոյին և շրջկոմներին, հատուկ հսկողության տակ առնել հիշյալ բնագավառներում գլուղական կուսկազմակերպությունների կատարած աշխատանքը: Միկթամանակ պլենումը հանձնարարում է Կենտկոմի

բյուրոյին՝ ափելի մեծ ուշադրություն նվիրել հեուկոր շրջանների գլուղներին՝ ուժեղացնելով Կենտկոմի ապարատի կենդանի կապն ու ղեկավարությունը նրանց նկատմամբ:

7. Տվյալ ետապում կուսկազմակերպության կարեւորագույն խնդիրն է խորհրդային աուտրի ծավալումը, բանմատակարարման կանոնավորումը: Թե գլուղի և թե քաղաքի կուսակցական կազմակերպությունը, մանավանդ աուտրա-կոոպերատիվ և հայթալթող որգանների կուսկազմակերպությունները, պետք է աուավելագույն ուշադրություն նվիրեն այդ հարցերին: Կենտկոմի և ԿՎՀ-ի պլենումը հանձնարարում է բոլոր քաղկոմներին և շրջկոմներին՝ ձեռնամուխ լինել ընդարձակելու և ամրացնելու աուտրա-կոոպերատիվ և մատակարարման սխտեմի կուսակցական կազմակերպությունները, վերակառուցել և աշխուժացնել բոլոր ողակների կուսաշխատանքը ներքեից մինչև վերև, ընդունակ դարձնելով նրանց բայլելիկորեն մարտնչելու կուսակցության այն դիրեկտիվներին և լողունգների իրականացման համար, վորոնք վերաբերում են աուտրի ու մատակարարման հարցերին:

8. Ամբողջ կուսկազմակերպությունը կուսուսուցման ցանցով ընդգրկելու և այդ ցանցը վճարար բարելավելու նպատակով անհրաժեշտ համարել ծավալելու պրոպագանդիստների պատրաստումն ու վերապատրաստումը, սխտեմատիկաբար ստուգել նրանց աշխատանքը, վճարար պայքարել պարապմունքները վիժեցնելու, պարապմունքներին անխնամ պատրաստվելու փաստերի դեմ: Բոլոր ձեռնարկություններում պարտադիր կարգով կազմակերպել դպրոցներ կուսակցու-

թխան թեկնածուներին համար և անցնել կուսուցիչ-
րության ցանցի կազմակերպման ըստ հերթափոխու-
թյունների:

9. Կուսակցական աշխատանքի վորակը բարձրաց-
նելու կարևորագույն լծակներից մեկը համարել ամեն-
որչա ինֆորմացիան կատարվող աշխատանքի, մասնա-
ների քաղաքական տրամադրությունների մասին կուս-
խմբից մինչև բջիջ, շրջկոմից մինչև Կենտկոմ: Պլենումն
առաջարկում է բոլոր շրջկոմներին և քաղկոմներին՝
հարկ չեղած բարձրության հասցնել կուսակցական ին-
ֆորմացիայի զրկածքը, վերացնելով ինֆորմացիայի
աշխատողների հոսունությունը, ընտրելով այդ աշխա-
տանքի համար կուսակցության քաղաքականապես կա-
յուն և պատրաստված անդամներին: Դրա հետ միասին՝
բջիջներում ինֆորմացիայի գործին մասնակից դարձ-
նել բանթղթակիցներին և գլուղթղթակիցներին, ապա-
հովելով շրջկոմի ինֆորմացիոն ապարատի ամենասերտ
կապն ու ղեկավարությունը նրանց նկատմամբ:

10. Պլենումն առանձնապես դնում է կուսկազմակեր-
պությունների առջև կուսակցության սոցիալական կազ-
մի աճման ու կարգավորման հարցը: Կուսակցական աշ-
խատանքի ճիշտ զրկածքի արդյունքը պետք է լինի
կուսկազմակերպության նորմալ, առողջ աճումը, լա-
վագույն առաջավորներով, հարվածայիններով, բան-
վորներով ու կոլտնտեսականներով: Պլենումը հանձնա-
վորներով ու կոլտնտեսականներով: Պլենումը հանձնա-
բարում է Կենտկոմի բյուրոյին մշակել այնպիսի կոն-
կրետ ձեռնարկումներ, վորոնք բարելավեն կուսակցու-
թյան աճման ու կարգավորման ասպարիզում բջիջների
կատարած աշխատանքը, մշակել ձեռնարկումներ այդ
գործում ինքնահոսը վերացնելու, կուսակցության ու-

գերջներն ուսումնասիրելու և կուսակցության մեջ ավե-
լի մեծ թվով դադգչահի բանվորներ ներգրավելու հա-
մար:

11. Պլենումն արձանագրում է, վոր Կենտկոմի և
շրջանային կոմիտեների կազմ-հրահանգչական բաժին-
ները թույլ են ձեռնարկել կուսկադրերի պորրեմի
լուծմանը: Կադրերի ուսումնասիրման և ընտրության
անկանոն վիճակը, դասընթացների ունկնդիրների պա-
տահական կազմը, կուսկադրերի մեծ հոսունությունը
շրջկոմներում, քաղկոմներում և խոշոր բջիջներում՝
վկայում է, վոր շրջկոմներն ու քաղկոմները թերագնա-
հատում են այդ կարևորագույն աշխատանքը:

Յեկնելով վերոհիշյալից, Կենտկոմի ու Կվձ-ի պլե-
նումն առաջարկում է բոլոր շրջկոմներին և քաղկոմնե-
րին՝ պատշաճ բարձրության հասցնել կուսկադրերի ու-
սումնասիրման ու ընտրության գործը, պայքար մղե-
լով հոսունության դեմ, և ամրացնելու կուսաշխատան-
քին լավագույն առաջավոր աշխատողների, պատշաճ
բարձրության վրա դնելով ստորին կուսաշխատողներին
ցուցց տրվող կոնկրետ ոգնությունն ու ղեկավարությու-
նը, բարձրացնելով կուսակցական հրահանգման վորա-
կը, հատուկ ուշադրություն նվիրելով նրանց գաղա-
փարական-քաղաքական մակարդակի բարձրացմանը:

12. Կուսակցության կարեւորագույն տնտեսական-
քաղաքական խնդիրների հաղող լուծումը պահանջում
է ըստ ամենայնի բարելավել կոմյերիտմիության ամե-
նորչա կուսակցական ղեկավարումը, կուսակցական
կազմակերպությունների կոնկրետ ոգնությունը կոմ-
յերիտմիությանը՝ ուժերի ճիշտ բաշխման, միու-
թյան քաղաքատիրարկչական աշխատանքի վերակա-

ռուցման, արտադրական ու կոտնտեսական չերիտասարգության նոր կադրերի մեջ կատարվող քաղաքատիրաբնական աշխատանքի ասպարիզում:

Կուսակցական կոմիտեները պետք է վճռական միջոցներ ձեռք առնեն բարելավելու կոմիտեի անդամների կազմը վորակապես և ամրացնելու կուսակցական շերտը կոմիտեի անդամների մեջ, ծավալելու բանվոր չերիտասարգության մեջ մասսայական աշխատանքը՝ ինտերնացիոնալիզմի և բալլևիկյան կուսակցականության վրա:

13. Կենտկոմի և ԿՎՀ-ի պլենումը անթույլատրելի չէ համարում ՎՀ—ԲԳՏ-ների մասսայական աշխատանքի նշանակության թերազնադատումը շրջանային կուսկազմակերպությունների կողմից և առաջարկում է վճռական բեկում ստեղծել ՎՀ—ԲԳՏ-ների մասսայական աշխատանքի դրվածքում, նվերելով գլխավոր ուղարկությունը ՎՀ-ների արտաշտատային աշխատողների ինստիտուտի կազմակերպմանը, ՎՀ—ԲԳՏ-ների ստորին հենակետներին ոժանդակել խմբակների, սեկցիաների, հսկիչ պոստերի աշխատանքի աշխուժացմանը:

14. Բոլոր կուսկազմակերպությունները պետք է ուժեղացնեն իրենց ղեկավարությունը՝ պրոֆկազմակերպությունների նկատմամբ՝ ստորին պրոֆկազմակերպությունների աշխատանքի վերակառուցման և ամրացման, նրանց մասսայական աշխատանքի աշխուժացման և արմատականության վերջին համագործակցության դրեկտիվների գործնական կենսագործման ասպարիզում:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՄՆԵՐԻ ԿԱԶՄԱՐՈՂԱՆԳՈՒԹՅԱՆ
ԲԱԺԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

(ՀԿ(Բ)Կ ԿԿ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ 1932 թ. ՀՈՒՆԻՍԻ 9-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ)

Կենտկոմը նշում է, վոր վերջին չերիտասարգում մի շարք շրջկոմներ (Ալաշկերտի, Արթիկի) և Լենինականի ու Յերևանի քաղկոմները կատարել են զգալի շրջադարձ չերիտասարգության դեպի կազմ. կուսամասսայական աշխատանքը, սակայն շրջկոմների մեծամասնությունը (Ղուրդուղուլի, Ղամարլու, Բասարգեչար, Աղբաբա և այլն) դեռևս շարունակում են հետ մնալ վերակառուցման մեջ և թերազնադատել կազմ. կուսամասսայական աշխատանքը: Մինչև այժմ դեռևս չկա անհրաժեշտ բեկում շրջկոմների կազմ. կուսաշխատանքում, նկատվում են տնտեսական խնդիրների հակադրման դեպքեր կազմ. կուսամասսայական աշխատանքի խնդիրներին, կազմահրահանգչական աշխատանքը դեռևս անբավարար է դրված, թույլ է դրված ստորին բջիջների աշխատանքի կոնկրետ, ոպերատիվ, շերտավորված ղեկավարությունը, ամենորոյա կազմ. կուսաշխատանքին դեռևս չեն ներգրավվում արտաշտատային հրահանգիչներ և վոչ կուսակցական կազմակերպությունների հրահանգիչները: չի վերակառուցված նաև աշխատանքը շրջկոմների մյուս սեկտորներում:

Յեղնելով դրանից, Կենտկոմը վորոշում է.

1. Առաջարկել Կենտկոմի կազմահրահանգչական բաժնին, բոլոր քաղկոմներին և շրջկոմներին՝ ծավալել

վճռական պայքար կազմ. կուսմասսայական աշխատանքի թերազնահատման դեմ և կարճ ժամանակում ստեղծել կտրուկ բեկում կազմակերպչական-կուսակցական և կուսակցական-մասսայական աշխատանքը գլուղական կուսկազմակերպութուններում ծավալելու տեսակետից:

2. Կատարել շրջկոմների կազմբաժնավարների թեթևացում այն պարտականություններից, վորոնք կապված չեն անմիջական կազմ. կուսմասսայական աշխատանքի հետ: Կազմբաժնավարները պետք է զբաղվեն և պատասխանատվություն կրեն առաջին հերթին կազմ. կուսմասսայական աշխատանքի դրման համար:

3. Այն շրջկոմներում, վորտեղ չի նախատեսված կուլտուրայի և պրոպագանդի սեկտորների կազմակերպումը, սեկտորների վարիչները և սեկտորների մյուս աշխատակիցներն առանձնացվում են արտաշտատային ղեկավար ակտիվից:

Բոլոր շրջկոմներին՝ սահմանել ինֆորմատոր-հաշվառողների շտատային պաշտոններ:

4. Առաջարկել ագիտմասբաժին, կինսեկտորին և Կենտկոմի կուլտպրոպագանդին՝ մի ամսվա ընթացքում, իրենց ղեկավարությամբ, վերակառուցել քաղկոմների և շրջկոմների համապատասխան սեկտորների աշխատանքը, այդ սեկտորների աշխատանքի մեջ մտցնելով ոպերատիվություն, կոնկրետություն և շերտավորում:

5. Հիմնական խնդիրները շրջկոմներին, կազմհրահանգչ. բաժինների աշխատանքում պետք է լինեն. ա. կուսկազմակերպությունների և ամուր ստորին կուսողակի ստեղծումը խորհրդատեսություններում, ՄՏ կայաններում և կոլտնտեսություններում, բ. կուսուժերի

հիշտ դասավորումը գլուղատնտեսական արտադրության մեջ, գ. ստորին բջիջների հրահանգումը և ղեկավարումը, դ. վերադաս կուսորգանների և ՎՀ վորոշումների կատարման ստուգման կազմակերպումը, ե. դրական փորձի ընդհանրացումը և հաղորդումը, զ. կուսկազմերի ուսումնասիրումը, անցումը և պատրաստումը, Է. կուսակցության անման կազմակերպումը և ը. կուսինֆորմացիայի դրվածքը:

6. Առաջարկել բոլոր շրջկոմներին՝ կարճ ժամկետում ստեղծել կազմհրահանգչ. բաժինների շուրջն արտաշտատային ակտիվ (արտաշտատային հրահանգիչներ): Շտատային հրահանգիչ-պրոպագանդիստներից և շրջկոմին կից արտաշտատային ակտիվից հունիս և հուլիս ամիսների ընթացքում կազմակերպել և վերջնականապես ձևակերպել հրահանգչական-պրոպագանդիստական խմբեր, ամրացնելով նրանց ըստ գլուղատնտեսական արտադրության միատեսակ բջիջների խմբին, իրադրծելու համար ստորին կազմակերպությունների կոնկրետ և շերտավորված ղեկավարությունը և ոգնությունը: Անհրաժեշտ է ամեն կերպ աշխատել մասնագիտացնելու թե շտատային և թե արտաշտատային հրահանգիչ-պրոպագանդիստներին, համապատասխան գլուղատնտեսական արտադրության առանձին ճյուղերի (բամբակ, ծխախոտ, անասնաբուծություն, խաղող, դաշտաբուծություն և այլն) զարգացման պայմաններին և խնդիրներին:

7. Բոլոր շրջկոմներին՝ ամենակարճ ժամկետում աշխատել ամրապնդելու և ավելի խորացնելու հենակետների աշխատանքի վերակառուցումը գլուղում, տալ նրանց կուսակցական ամուր կաղերբ, ստեղծելու հա-

մար հանձին հենակետներին՝ շրջկոմներին լավագույնս
ոգնական-հրահանգիչներ, նրանց աշխատանքի դրական
փորձը շրջակա գյուղական և կոլտնտեսային բջիջնե-
րին հաղորդելու գործում:

8. Հանձնարարել բոլոր շրջանային թերթերի խմբ-
բազրույթյուններին՝ ուժեղացնել ուշադրությունը դեպի
կազմ. կուսմասսայական աշխատանքի հարցերը: Շրջ-
կոմների կազմհրահանգիչներին՝ ունենալ մշտական
հսկողություն, մասնակցություն և դեկավարություն
շրջանային թերթերի խմբադրույթյունների վերաբեր-
մամբ, ներկուսակցական շինարարության հարցերի
շուրջը:

ԿՈՒՍԿԱՍՏԱՆԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՐՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

(ՀԿԲ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ)

Չնայած Կենտկոմի 1932 թ. հունվարի 4-ի վորոշ-
մանը՝ կուսակցական ինֆորմացիայի աշխուժացման և
ուժեղացման մասին, այնուամենայնիվ, մինչև այժմ
չկա հարկ չեղած բեկումը կուսակցական ինֆորմացիան
պատշաճ բարձրությամբ վրա դնելու գործում:

Կենտկոմը նշում է, վոր մինչև այժմ շրջկոմները
չեն կարողացել պատշաճ դեկավարությունը ապահովել
ինֆորմացիոն աշխատանքը կուսակցական բջիջներում,
բջիջներում նշանակված ինֆորմատորները մնում են
միայն թղթի վրա, չկա նրանց աշխատանքի հաշվա-
ռում և անհրաժեշտ դեկավարություն բջիջների բյու-
րոսների կողմից:

Շատ շրջկոմներում նույնպես բացակայում է ին-
ֆորմացիոն աշխատանքը (Աշտարակ, Վաղպատ, Լենի-
նական, Ղամարլու, Աբարան, Սիսիան, Վեդի, Դիլի-
ջան, Յերևան): Մի շարք ուրիշ կուսկոմներ ինֆորմա-
ցիա չեն տալիս կուսակցության կարևորագույն դիրեկ-
տիվների կատարման մասին միմիայն Կենտկոմի կողմից
պահանջներից հետո:

Շրջկոմների մեծամասնությունը չի կատարել Կենտ-
կոմի 1932 թ. հունվարի 4-ի վորոշումը՝ ինֆորմացիայի
աշխատողներին առնվազն մի տարով ամբաստանում
սին (Աշտարակ, Դիլիջան, Ստեփանավան, Վաղպատ,
Ղուրդուղուլի և այլն): Իսկ Յերևանում քաղկոմը մինչև
այժմ չունի ինֆորմատոր:

Համարելով ինֆորմաշխատանքի թույլ դրվածքը նրա թերագնահատման արդյունքը, ինֆորմացիոն աշխատանքը վորպես կուսաշխատանքի տեխնիկական ճյուղ դիտելը կուսկազմակերպութունների կողմից, կենտկոմն առաջարկում եւ:

1. Բոլոր քաղկոմներին և շրջկոմներին՝ մոտ ժամանակում վերակառուցել ինֆորմացիոն աշխատանքը այնպես, վոր նա դառնա ամբողջ կուսակցական աշխատանքի ոպերատիվ մասը, վորի համար՝

ա. Ստուգել բլիշների, կուսկոլեկտիվների և կուսկոմների ինֆորմատորների կազմը և աշխատանքը թե՛ քաղաքում և թե՛ գյուղում, աշխատելով ամրապնդել և բարձրացնել նրանց աշխատանքի վորակը, դարձնելով այն հիմնական կուսբեռնավորում:

բ. Բոլոր կուսկոմներին, կուսկոլեկտիվներին և բլիշներին կից ստեղծել ինֆորմակտիվ՝ բանգյուլթըդ-թակից կուսակցականներեց, իսկ քաղկոմներին և շրջկոմներին կից՝ բացի նրանցից նաև գերատեսչական և վոչ կուսակցական կազմակերպութունների հրահանգիչներից:

գ. Քաղկոմների և շրջկոմների բոլոր կազմհրահանգչական բաժիններին՝ ուժեղացնել ղեկավարութունը ինչպես բլիշների, այնպես եւ իրենց ապարատի ինֆորմացիոն աշխատանքի նկատմամբ: Բոլոր քաղկոմներում և շրջկոմներում մինչև ոգոստոսի 15-ը կոմպլեկտավորել ինֆորմացիոն ապարատը քաղաքականապես գրագետ աշխատողներով, կուսապարտի բոլոր ողակներում ինֆորմաշխատողներին ամրացնել այդ աշխատանքում առնվազն մեկ տարով:

դ. Հանձնարարել կենտկոմի կազմհրահանգչական բաժնին՝ կուսակցական ապարատների գծով, իսկ կազ-

մերի բաժնին՝ գերատեսչական կազմակերպութուններին գծով, վերանայել ինֆորմաշխատողների կազմը, ձգտելով ինֆորմացիոն աշխատանքի համար ջոկել վորակյալ գրագետ և ոպերատիվ աշխատողներին:

ե. Կազմակերպել կենտկոմի կազմհրահանգչական բաժնին կից քաղաքական ինֆորմացիայի սեկտոր, վորին կից ստեղծել ինֆորմակտիվ գերատեսչական կազմակերպութունների կուսակցական հրահանգիչներեց, գեկուցողներից, աշխատողներից, վորոնք մեկնում են տեղերը, ինֆորմակտիվ վոչ կուսակցական կազմակերպութունների հրահանգիչներից, ոգտագործելով նրանց տեղերում կատարվող աշխատանքի ընթացքի մասին կենտկոմին հնարավոր չափով լիակատար ինֆորմացիա տալու համար:

2. Կուսակցական ինֆորմացիայի հիմքում դնելով կուսակցական կարևորագույն դիրեկտիվներ իրագործման ընթացքի արտացոլումը, բլիշների ներկուսակցական աշխատանքի և վոչ կուսակցական կազմակերպութունների աշխատանքի ուսումնասիրումը և լուսաբանումը, ազդանշանումը բացերի, կուսակցութւյան գծի աղավաղումների բոլոր փաստերի մասին, մասսաների տրամադրութւյունների լուսաբանումը հիմնական քաղաքական կամպանիաներ անցկացնելու ընթացքում, տնտեսական-քաղաքական «սուր» հարցերի, հանրապետութւյան և Խորհրդային Միութւյան կյանքի կարևորագույն դեպքերի շուրջը, առանձին կազմակերպութւյունների աշխատանքի գրական փորձի հավաքումը, ընդհանրացումը և հաղորդումը, կուսակցական մասսաների առջև կուսակցական կազմակերպութւյունների կացութւյան և ղեկավար կուսորգանների աշխա-

տանքի լուսարանումը,—բոլոր կուսկազմակերպությունները պետք է հրաժարվեն յերկար ինֆորմացիոն տեղեկագրեր և զեկուցումներ գրելուց և անցնեն կարճ հաղորդագրություններ կազմելուն և տեղական կուսկազմակերպություններին կյանքի և աշխատանքի վերաբերյալ առանձին հարցերի, տեղերում կատարվող ամենակարևոր դեպքերի, մասսաների քաղաքական տրամադրություններին, կուսակցության գծի աղավաղումներին և այլնի մասին անհապաղ ազդանշաններու պրակտիկային, ձգտելով, վոր դրանք ամենաարագ արձագանք գտնեն բջիջների, կուսկոմիտեների, շրջկոմների և ղեկավար կուսորգանների կողմից:

3. Կենտրոնական խորհրդային, տնտեսական, պրոֆմիութենական, հասարակական և կոմյերիտական բոլոր կազմակերպություններին՝ ձեռք առնել վճռական միջոցներ բարելավելու ինֆորմացիոն աշխատանքի դրվածքն իրենց ապրատներում:

Կենտկոմի կազմհրահանգչական բաժնին՝ ոգոստոսին ստուգել ինֆորմացիոն աշխատանքի կացությունն այդ կազմակերպություններում:

4. Բոլոր թերթերի խմբագրություններին, թե կենտրոնական և թե շրջանային, ամեն ամիս կազմել ինֆորմացիոն տեղեկագրեր թերթերի խմբագրության կողմից ստացված նյութերի, հատկապես չհրապարակվածներին, մասսաների քաղաքական տրամադրության, կուսակցության գծի աղավաղումներին, կուսակցության դիրքեկտիվների կատարման մասին և այլն:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՄԵՋ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

(ՀԱՍՏԱՏՎԱԾ Ե ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՅԻ 1932 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ՆԻՍՏՈՒՄ)

Արձանագրելով վորոշ տեղաշարժեր կուսակցական կադրերի մեջ կատարվող աշխատանքում, հատկապես նրանց պատրաստման և վերապատրաստման ասպարիզում, Կենտկոմը, սակայն, նշում է տեղերում կուսակցական կադրերի ուսումնասիրման և ընտրման գործի զգալի չափով անուշադրության մատնվելը, մի շարք շրջկոմների թույլ կոմպլեկտավորումը կուսկադրերով, կուսուժերի հաճախ անճիշտ դասավորումը:

Մի շարք շրջկոմներում հարկ չեղած ուշադրությունը չի դարձվում կուսկադրերին, հատկապես ստորիններին, ուսումնասիրման, ընտրման, վերապատրաստման և աճեցման վրա: Թերազնահատվում է կուսկադրերի վերապատրաստման աշխատանքը շրջկոմների մեծամասնության կողմից, մասնավորապես Ստեփանավանի, Աղբաբայի, Մարտունու, Աբարանի և այլն, վորի հետևանքով այդ շրջաններում տապալվեցին գյուղական կուսակտիվի վերապատրաստման միամսյա կուրսերը և տեղի ունի Դարաչիչազի ամառային խոամսյա կուրսերի անկոմպլեկտավորում:

Կենտկոմը հատկապես նշում ենաև Ստեփանավանի, Դիրջանի, Ախտայի, Ղարաքիլիսայի, Աբարանի և Թալինի շրջկոմների անթույլատրելի վերաբերմունքը դեպի

կուսակազմերի վերապատրաստումը քրդական և ռուսական գյուղերի կուսակառուցվելը:

Ձկա ընդունակ, կուսաշխատանքում աճող ընկերների ուսումնասիրում և հաշվառում, անբավարար ե ընթանում նրանց առաջընթացի աշխատանքը:

Նկատվում ե նաև մեծ հոսունություն վոչ միայն ստորին կուսակազմերի (մանագործարանում—հինգ ամսովա ընթացքում կուսակազմակերպիչները և խմբակազմակերպիչները փոխվել են 4—5 անգամ), այլև շրջանային ղեկավար աշխատողների (վերջին տարվա ընթացքում շրջկոմների քարտուղարները փոխվել են Աղբաբայում և Մեղրիում 3 անգամ, Մարտունում՝ 2 անգամ, Կինսեկտորների վարիչները Մեղրիում և Ախտայում՝ 3 անգամ, մնացած գրեթե բոլոր շրջաններում՝ 2 անգամ և այլն), վերը բացատրվում ե.

ա. Հրահանգչական աշխատանքի թույլ դրվածքով և անբավարար գործնական ոգնությունը:

բ. Կուսաշխատողների գաղափարական-քաղաքական մակարդակի բարձրացման աշխատանքի թուլությունը, իսկ տեղ-տեղ լիակատար բացակայությունը:

գ. Կուսաշխատողների և կուսակազմերի ղեկավարի լուրջ ուսումնասիրման բացակայությունը:

Յեղնելով դրանից, Կենտկոմը վորոշում ե.

Առաջարկել Կենտկոմի կազմհրահանգչական բաժնին և ՀԿ Բ)Կ բոլոր քաղկոմներին, շրջկոմներին և կուսկոմներին՝ վճռական պալքար մղել կուսակցական կադրերի մեջ կատարվելիք աշխատանքի թերադնահատման դեմ:

Բոլոր կուսակցական որդանները պետք ե ծավալեն

սխտեմատիկ ամենորյա աշխատանք նոր կուսակազմերի պատրաստման, վերապատրաստման, առաջընթացի և աճեցման ասպարիղում, հարկ չեղած բարձրության վրա դնելով կուսուսթերի հաշվառման, ուսումնասիրման, ճիշտ դասավորման և ոգտագործման գործը, ամեն կերպ պալքարելով նրանց հոսունության դեմ, վորի համար.

1. Առաջարկել Կենտկոմի կազմհրահանգչական բաժնին.

ա. Պատշաճ բարձրության վրա դնել բոլոր նոմենկլատուրային աշխատողներին և քաղկոմների ու շրջկոմների կազմի (քաղկոմների, շրջկոմների, կուսկոմների պատասխանատու աշխատողների, խոշոր արտադրական բլիշների քարտուղարները, հենակետները, կոլտնտեսությունների, ՄՏ կայանների և խոշոր կոլտնտեսային բլիշների քարտուղարները՝ յուրաքանչյուր շրջանում մոտավորապես 20—30 մարդ) ուսումնասիրումը և ճանաչումը:

բ. Ուսթեղացնել կուսաշխատողների ղեկերվի (150—200 մարդ) կազմակերպման և ուսումնասիրման աշխատանքը, հաշվառման չնթարկել և ուսումնասիրել բոլոր կոմբուհները և կուսպրոցներն ավարտողների աշխատանքը, ինչպես նաև ընդունակ և աճող ստորին կուսաշխատողների, նրանց ավելի պատասխանատու կուսաշխատանքի առաջ քաշելու համար:

2. Պարտավորեցնել բոլոր շրջկոմներին և կուսկոմներին մի դեկադայի ժամկետում առանձնացնել հատուկ արտաշտատային աշխատողների կուսակցական կադրերի ասպարիղում, Յերևանի և Լենինականի քաղկոմներ-

ըին՝ առանձնացնել մեկական շտատային աշխատողի կուսակազմերի ասպարիզում:

3. Առաջարկել բոլոր քաղկոմների կազմհրահանգչ. բաժիններին ուսումնասիրելու բոլոր արտադրական բջիջների քարտուղարների կազմը և նրանց կուսակա-
տիվը—բյուրոյի անդամներ, սեկտորների վարիչներ, կուսկազմակերպիչներ, խմբկազմակերպիչներ (յուրա-
քանչյուր բջիջում 5—7 մարդ), ինչպես նաև ձեռնար-
կել կազմակերպելու և ուսումնասիրելու կուսակազմի
ոեզերվը 100—150 մարդ:

4. Բոլոր շրջկոմների կազմհրահանգիչները պետք է ուսումնասիրեն և լավ ճանաչեն կուսկոմի և բջիջի
յուրաքանչյուր քարտուղարին, ինչպես նաև գյուղա-
կան կուսակազմի—բյուրոյի անդամներին, սեկտորնե-
րի վարիչներին, խմբկազմակերպիչներին և կուսկազ-
մակերպիչներին (3—5 մարդ յուրաքանչյուր բջիջում),
ինչպես նաև ունենալ ու ճանաչել 50—80 մարդ կուս-
ակազմի ոեզերվ:

5. Կուսակազմերի հոսունության դեմ պայքարելու համար.

ա. Կտրականապես արգելել բոլոր քաղկոմներին և շրջկոմներին Կենտկոմի նոմենկլատուրայի մեջ մտնող աշխատողների տեղափոխումը, հանումը և տեղաշար-
ժումը, առանց Կենտկոմի գիտության և հավանու-
թյան:

բ. Կուսկոմիտեները քարտուղարների և սեկտորնե-
րի վարիչների, ինչպես նաև բջիջների քարտուղարնե-
րի հանումը, տեղափոխումը կատարել միայն քաղկոմ-
ների և շրջկոմների բյուրոյի վորոշումով:

գ. Ցեխբջիջների քարտուղարների, խմբկազմակեր-
պիչների և կուսկազմակերպիչների հանումը և տեղա-
փոխումը կատարել միայն կոմիտեի, կոլեկտիվի,
բջիջի բյուրոյի վորոշումով՝ քաղկոմների և շրջկոմների
կազմհրահանգչական բաժինների գիտությամբ և հա-
վանությամբ:

6. Կուսակազմի պատրաստման և վերապատրաստ-
ման համար, բացի գոյություն ունեցող շրջկուսազմա-
րոցներից, կազմակերպել 1932/33 թ.

ա. 15-որյա կուրսկոնֆերանսներ բոլոր շրջաննե-
րում (յերկու գումարամամ՝ աշնանը և ձմռանը) ստո-
րին ողակի կուսակազմի վերապատրաստման համար
(խմբկազմակերպիչների, կուսկազմակերպիչների և կին-
կազմակերպիչների):

բ. Միամսյա կուրսեր բոլոր շրջաններում միջին
ողակի կուսակազմի վերապատրաստման համար (յեր-
կու գումարամամ՝ աշնանը և ձմռանը):

գ. Ազգափոքրամասնությունների շրջաններում կուս-
աշխատողների կազմը բարելավելու համար ունենալ
միամսյա կուրսեր ռուսական, քրդական և թրքական
բջիջների կուսակազմի վերապատրաստման համար
(Ստեփանավան—ռուսների համար, Աբարան—քրդերի
համար, Վեդի—թուրքերի համար):

դ. Յեռամսյա, անընդհատ գործող մշտական կուր-
սեր շրջանային կուսակազմի վերապատրաստման
համար (կուսակցության և ԼԿՅԵՄ շրջկոմների, շրջ-
գործկոմների բաժվարների, խոշոր արտադրական,
արդյունաբերական, խորհրտեսային, ՄՏԿ և
կոլտնտեսային բջիջների, հեռակետների քար-

տուղարները և այլն (կոմբուսիւն կից 30 մարդ)։

Առաջարկել կենսոկոմի կուլտպրոպ և կազմհրահանգ-
չական բաժիններին՝ մեկ ամսվա ընթացքում բոլոր
վերոհիշյալ կուլբսերի մանրամասն պլանը, նախահա-
շիվը և ծրագիրը ներկայացնել կենսոկոմի քարտու-
ղարությանն ի հաստատութիւն։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԵՋ ԿՍՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

(ՊԱՐՑՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ 1932 թ. ՀՈՒԼԻՍԻ 3-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ)

Կուսակցության մեջ լավագույն հարվածաչինների,
բանվորներից և կոլտնտեսականներից, խոշոր ներհո-
սանքի և մի շարք շրջաններում մեծ քանակությամբ
թեկնածուների առկայության կապակցությամբ (Փա-
շալու—56⁰/₀, Մեղրի—40⁰/₀, Վեդի—46⁰/₀, Բեշլիշքենդ—
մինչև 42⁰/₀ և այլն), բացառիկ կարևոր նշանակութիւն
ե ստանում կուսակցության թեկնածուների մեջ կա-
տարվելիք կուսակցական-դաստիարակչական աշխա-
տանքի ուժեղացումը և նրանց ներգրավումը գործնա-
կան աշխատանքի։

Կենսոկոմը նշում է, վոր շրջկոմների և բջիջների
կողմից այդ կարևորագույն խնդրի վրա դեռևս չի
դարձվում բավարար ուշադրութիւն։ Լենինականի և
Յերևանի քաղկոմների միջոցառումները դեռևս բավա-
րար չեն կուսակցության թեկնածուների քաղաքական
և բայլշկիկյան դաստիարակության զրման համար և
վոչ միշտ ապահովում են բավարար պատրաստումը՝
վերջիններիս կուսակցության անդամ փոխադրելու
համար։ Իսկ գլուղական կազմակերպութիւններում
այդ աշխատանքը դեռևս թողնված է ինքնահոսի։

Յեւնելով դրանից, կենսոկոմի քարտուղարութիւնը
վորոշում է.

1. Առաջարկել բոլոր քաղկոմներին, շրջկոմներին և

բջիջներին, առանձնապես գյուղականներին, կիպ զբաղվել կուսակցության թեկնածուների մեջ կատարվելիք աշխատանքի հարցերով, սիւսեմատիկ կերպով լսել ղեկուցումներ նրանց մեջ կատարվող կուսակցական դաստիարակչական աշխատանքի ընթացքի մասին:

2. Վերանայել թեկնածուների կազմը, թեկնածուական ստաֆի տարեկան պատճառների ուսումնասիրման տեսանկյունից, մի ամսվա ժամկետում քննել թեկնածուների բոլոր դիմումները, նրանց կուսակցության անդամ փոխադրելու համար, հետազայում ապահովել նրանց ժամանակին տեղափոխումը կուսակցության մեջ:

3. Կուսակցության թեկնածուների մեջ կատարվող գործնական աշխատանքում քաղկոմները, շրջկոմները և բջիջները պետք է ձգտեն թեկնածուների լիակատար հաճախմանը կուսակցական ժողովներին, կուսակցական դիսցիպլինայի կատարմանը նրանց կողմից (կուսմոծումների վճարումը, հանձարարությունների կատարումը և այլն):

4. Առաջարկել բոլոր քաղկոմներին և շրջկոմներին, լինելով յուրաքանչյուր թեկնածուի ընդունակություններից, ներգրավել նրան գործնական քաղաքական, տնտեսական աշխատանքում, պարբերաբար ստուգել նրան աշխատանքի ընթացքում, ուսումնասիրել և ամեն կերպով ոգնել նրան աշխատանքում, բարձրացնել նրա ակտիվությունը ներկուսակցական կյանքում և առաջատար դերը արտադրության մեջ, թե զուտ արտադրական, և թե քաղաքական տեսակետից:

5. Թեկնածուների մեջ մասսայական-բացատրական աշխատանք ծավալելու և կուսակցական որգաններին

բոլոր հիմնական վորոշումները նրանց հասցնելու համար առաջարկել բոլոր շրջկոմներին և քաղկոմներին՝ կազմակերպել սիստեմատիկ զրույցներ թեկնածուների հետ, թեթերի ընթերցում հանրակացարաններում, կարմիր անկյուններում, դադարի ժամանակ և այլն:

Կայուն և քաղաքականապես դրաճեա կուսակցականներին թեկնածուներին ամրացնելու միջոցով ուսումնասիրել նրանց անհատական հատկությունները, ցույց տալ կոնկրետ ոգնություն կուսուսուցման մեջ, լուսարանել նրանց հետաքրքրող բոլոր քաղաքական-տնտեսական հարցերը, նշել, թե ինչպես և ինչ պետք է կարգալ, և պատրաստել նրանց կուսակցության անդամ փոխադրելու համար:

6. Թեկնածուների մեջ կատարվելիք աշխատանքի հիմնական մեթոդներից մեկը հանդիսանում է հին բալլէիկների զրույցների կազմակերպումը թեկնածուների հետ՝ ցարական Ռուսաստանի բանվոր դասակարգի կացության և պրոլետարիատի հեղափոխական պայքարի վերաբերյալ հարցերի շուրջը. լուսարանել կուսակցության պատմության առանձին հարցերը և կուսակցության ղեկավար դերը պրոլետարական հեղափոխության մեջ:

7. Առաջարկել Կենտկոմի կուլտպրոպլին՝ մշակել կոնկրետ ձեռնարկումներ և ապահովել ամառային և աշնանային կուսուսուցման շրջանում անխտիր բոլոր թեկնածուներին մարքսիստական-լենինյան ուսուցումով: Պրոպագանդիստական կադրերով թույլ շրջանները պրոպլեմբեր ուղարկելու միջոցով, անմիջական աշխատանքով և ոգնությամբ, ուժեղացնել թեկնածուներին քաղուսուցման գործը:

Թեկնածուների քաղուսուցման հիմնական ողակը համարել թեկնածուական քաղխմբակները, վորտեղ առաջին հերթին պետք է մշակվեն կուսակցության կանոնադրության և ծրագրի հարցերը:

8. Առաջարկել բոլոր քաղկոմներին և շրջկոմներին՝ հուլիսի 15-ից մինչև ոգոստոսի 15-ը բոլոր կազմակերպություններում, հատուկ նշանակված բջիջի և բրիգադի միջոցով անցկացնել կուսակցության թեկնածուների մեջ կատարվող քաղմասսայական և դաստիարակչական աշխատանքի ստուգատես և ոգոստոսի 20-ին բոլոր հանրագումարված նյութերը ներկայացնել կենտկոմին:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՈՑԿԱԶՄԻ ՅԵՎ ԱՃՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ 1932 ԹՎԻ ՅԵՐՐՈՐԴ ՅԵՌԱՄՍԵԱԿԻ ԸՆԹԱՅԳՈՒՄ

ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՅԻ 1932 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի ՆԻՍՏՈՒՄ)

Կենտկոմը նշում է, վոր 1932 թ. յերեք յեռամսյակների ընթացքում ՀԿ(Բ)Կ մեջ մտել են 4.151 մարդ, վորից 2.026 (48,8%) արտադրական բանվորներ, և միայն 1932 թ. յերրորդ յեռամսյակում ընդունված են 1.248 մարդ, վորից 50% - ն արտադրական բանվորներ:

Կենտկոմն արձանագրում է մի շարք նվաճումներ ՀԿ(Բ)Կ աճման և կազմի կարգավորման գործում յերրորդ յեռամսյակում, այն է՝

1. Բարձրացել է ընդունելության կազմի մեջ արտադրական բանվորների տոկոսը (50% , յերկրորդ յեռամսյակի 45,5% -ի դիմաց):

2. Կան զգալի տեղաշարժեր թեկնածուների մեջ կատարվող աշխատանքում, վորոնց տոկոսը կազմակերպության մեջ իջել է առ 1-ն հունվարի 1931 թ. 32,3% -ից մինչև 30,2% , առ 1-ն հոկտեմբերի 1932 թ.:

3. Թեև դանդաղ, բայց անշեղ բարձրանում է կանոնադրության տոկոսն առ 1-ը հունվարի 1932 թ. 8,5% -ից մինչև 9,8% , առ 1-ը հոկտեմբերի 1932 թ., և թուրքերի տոկոսը առ 1-ը հունվարի 1932 թ. 6,5% -ից մինչև 7,4% , առ 1-ը հոկտեմբերի 1932 թ.:

Կենտկոմը նշում է, վոր թեև ընդունվողների ընդ-

հանուր կազմի մեջ նկատվում է արտադրական բան-
վորների տոկոսի բարձրացումը ($50\frac{0}{10}$ —յերկրորդ յեռ-
ամսյակի $44,6\frac{0}{10}$ -ի դիմաց), այնուամենայնիվ նկատ-
վում է կուսակազմակերպությունների ուշադրության
և աշխատանքի թուլացում, հատկապես արդյունաբե-
րական ուղղությունում, կուսակազմակերպությունների աճ-
ման և կարգավորման գործում, վորի հետևանքով ար-
դյունաբերական շրջաններում նկատվում է կուսակցու-
թյան մեջ ընդունվողների սոցիալական կազմի վատա-
ցում: Այսպես՝ ընդունված արտադրական բանվորների
կազմը հետևյալն է.

Լենինական	74,5	միասին $80\frac{0}{10}$
Ալլահվերդի	57,9	»
Ղափան	58,0	»
Ղարաքիլիսա	71,7	»
Արթիկ	43,2	»

Կենտկոմը, յերկրորդ չեռամսյակի ընթացքում աճ-
ման արդյունքների մասին՝ իր վորոշման մեջ պահան-
ջում էր շրջկոմներից վերջ տալ կոմունիստ բանվոր-
ների հոսունությանը, ամրացնել նրանց արտադրու-
թյանը: Սակայն այդ հարցը դեռևս չի դարձել բոլոր
կուսակազմակերպությունների, հատկապես Յերևանի,
Ալլահվերդու, Ղուրդուղուլու և Վեդիի շրջկոմների, ու-
շադրության կենտրոնը, այդ շրջաններում կազմակեր-
պության մեջ բանվորների տոկոսը բարձրանալու փո-
խարեն իջել է, այսպես, որինակ՝

Ա. 1/IV 1932 թ.			Ա. 1/X 1932 թ.		
Ալլահվերդի	926 բանվոր կամ $56,4\frac{0}{10}$		958 բանվոր կամ $55,5\frac{0}{10}$		
Յերևան	1512 » »	34,3 »	1386 » »	30,0 »	
Ղուրդուղուլի	125 » »	25,8 »	142 » »	24,6 »	
Վեդի	51 » »	12,6 »	90 » »	12,5 »	

1932 թվի յերեք չեռամսյակների ընթացքում մի
կազմակերպությունից մյուսը տեղափոխվել է 3627
մարդ, վորից 965-ն արտադրական բանվորներ են:
Հեռացողների այս թվից առանց շրջկոմի գիտություն
դուրս են յեկել 941 մարդ, վորից 355 բանվորներ:

Բանվորների, գյուղատնտեսական բանվորների
թույլ ներգրավման հետևանքով, ինչպես նաև կուսակ-
ցության մեջ յեղող բանվորներին դադարեցնելու ամրաց-
նելու թույլ աշխատանքի պատճառով, արտադրական
բանվորների տոկոսը կազմակերպության կազմի մեջ
իջել է այսպես.

Ա. 1/VII 1932 թ.	Ա. 1/X 1932 թ.	
Բանվորներ	29,7	29,4
Գյուղացիներ	32,2	32,7
Ծառայողներ	29,8	30,3
Սովորողներ	5,6	5,7
Տնայնագործներ	0,5	6,6
Բոլոր մնացածները	2,1	1,3

Կենտկոմն իր վորոշման մեջ՝ յերկրորդ չեռամսյակի
արդյունքների մասին, սրեց բոլոր կուսակազմակերպու-
թյունների ուշադրությունը նաև ընդունվողների վո-
րակական կազմի վրա, սակայն յերրորդ չեռամսյակի
ավլալներն ասում են, վոր այդ հարցը նույնպես չի
դարձել շրջկոմների ուշադրության կենտրոնը կուսակ-
ցության մեջ անդամներ ներգրավելու գործում: Ըն-
դունվող բանվորները և կուստնտեսականները վոյ բո-
լորն են ստուգվում հասարակական և հարվածային
աշխատանքում: Այսպես՝

Ընդունված բանվորների		հարվածայիններ	
կազմում		կուսդպրոց ավարտող.	
		հաս. աշխատանքի ներգրավված.	
		81,7 $\frac{0}{10}$	
		52,4 $\frac{0}{10}$	
		40,7 $\frac{0}{10}$	

Ընդունված կոլտնտեսականների
կազմում

հարվածայիններ 61,70%
կուսակցություն 55,80%
հաս. աշխ. ներգրավված. 34,00%

Կենտկոմը կրկին հրավիրում է բոլոր կուսակազմակերպությունների ուշադրությունը կուսակցության մեջ բանվորունի-կոլտնտեսունիների թույլ ներգրավման, այդ հարցի թերազնահատման վրա, հատկապես արդյունաբերական շրջաններում և տեխնիկական կուլտուրաների շրջաններում:

Լենքադկոմը, հակառակ Կենտկոմի դիրեկտիվներին—«մշակել կոնկրետ ձեռնարկումներ, վորոնք ապահովեն բանվորունիների և կոլտնտեսունիների տոկոսի զգալի բարձրացումը կուսակցության մեջ»—իջեցրել է կանանց ընդունման տոկոսը յերկրորդ յեռամսյակի դիմաց (յերկրորդ յեռամսյակում ընդունված է 20%⁰, իսկ յերրորդ յեռամսյակում 15,5%⁰)։ Իջեցում է տվել նաև Յերքադկոմը (16,2%⁰ յերկրորդ յեռամսյակում, 11,1%⁰ յերրորդ յեռամսյակում)։

Յեղնելով դրանից, Կենտկոմի բյուրոն վորոշում է.

1. Առաջարկել բոլոր շրջկոմներին՝ անշեղ կենսագործել Կենտկոմի 1932 թ. ոգոստոսի 23-ի վորոշումները «կուսակազմակերպությունների աճման մասին 1932 թ. յերկրորդ յեռամսյակում», յեղնելով բանվորական կորիզը կուսակցության մեջ հետագայում ընդլայնելու և ամրացնելու խնդրից, ծավալելով քաղաքական-մասսայական աշխատանք ակտիվիստ-հարվածայիններին ջոկելու և կուսակցության մեջ ընդունելու, ինչպես նաև նրանց արտադրության ամրացնելու ասպարիզում:

2. Համարելով կարևորագույն խնդիր կուսակցական

կազմակերպությունների ամրացումը ՄՏ կայաններում, խորհտնտեսություններում և նորակառույցներում, առաջարկել շրջկոմներին վորակյալ բանվորների և հարվածայինների, կառուցող և գյուղատնտեսական ակտիվիստ բանվորների մեջ ներգրավումը ուժեղացնելու միջոցով ապահովել կուսյերտի անշեղ բարձրացումը ՄՏ կայաններում, խորհտնտեսություններում և նորակառույցներում:

Կենտկոմը պարտավորեցնում է բոլոր շրջկոմներին ուշի-ուշով զբաղվել կուսակազմակերպությունների աճման և կազմի կարգավորման հարցերով և ապահովել չորրորդ յեռամսյակի ընդունելության կազմի մեջ արտադրական բանվորներ.

Արդյունաբերական շրջաններում առնվազն	80% ⁰
Յերքադկոմում	90% ⁰
Բամբակացան	50—60% ⁰
Մյուս	30—50% ⁰

Կենտկոմը նշում է, վոր ներգրավումը կուսակցության մեջ պետք է սերտորեն կապվի բանվորների և կոլտնտեսային մասսաների հետագա մորիլիզացիայի հետ՝ պայքարելու հանուն սոցյինարարության բայլշեիկյան տեմպերի, հանուն հնգամյակի ավարտական տարվա արտադրական-տնտեսական պլանների կատարման:

4. Կենտկոմը պահանջում է բոլոր շրջկոմներից՝ ուժեղացնել աշալրջությունը ընդունելության և կուսակցության մեջ փոխադրելու գործում. ուշի-ուշով ուսումնասիրել ընդունվողների սոցիալական ծագումը և դրությունը, ինչպես նաև անցյալ աշխատանքը, մասնակցությունը և վերաբերմունքը դեպի դասակարգա-

յին պայքարը, միաժամանակ վճռականապես ազատ-
վելով զստակարգայնապես խորթ, քայքայված տար-
րերից:

5. Դեկտեմբերի 3-ի կուսակցական միասնական
որը նվիրել կուսկազմակերպությունների աճման և
սոցկազմի կարգավորման հարցերին:

Կենտկոմի կազմհրահանգչական բաժնին՝ տալ շրջ-
կոմներին համապատասխան հրահանգ:

6. Դեկտեմբեր ամսում Կենտկոմում (կազմխորհրդ-
ղակցության մեջ) լսել Յերեանի, Ալլահվերդու և Վա-
ղարշապատի շրջկոմների ղեկուցումները կուսկազմա-
կերպությունների աճման մասին:

7. Յերրորդ լեռամսյակի վիճակագր. հաշվետվու-
թյուն չներկայացնելու համար նկատողություն անել
Նոր Բայազետի և Փաշալվի շրջկոմների կազմհրահանգ-
չական բաժնիներին: Պարտավորեցնել բոլոր շրջկոմ-
ներին ներկայացնել լեռամսյակային վիճակագրական
հաշվետվությունները առանց ուշացնելու, այսինքն
լեռամսյակի վերջից վոչ ուշ:

ՄԻԱՄԱՍԿԱՆ ԿՈՒՍՈՐ ԱՆՅԱՅՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԲԱՂՎԱԾԻ ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ 1932 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի ՎՈՐՈՇՈՒՄԻՑ)

3. Սահմանել քաղաքային և շրջանային բոլոր
կենտրոններում, յերկաթուղային տրանսպորտի և ար-
տադրական կուսկազմակերպություններում ամսական
2 միասնական կուսոր՝ յուրաքանչյուր ամսի 3-ին և
19-ին, իսկ գյուղական կուսկազմակերպությունների
համար—ամեն ամսի 6-ին և 24-ին:

1931—32 թ. ԱՇՆԱՆ-ՁՄԵՌԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ
ՌԵՍՈՐՏԱՆ ԱՐԳՑՈՒՆ-ՔՆԵՐԻ ՅԵՎ ՀԵՏԱԳԱ
ԱՆՆԵԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(ՀԿ(Բ)Կ ԿԿ ԲՅՈՒՐՈՅԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ)

Դինարկելով կուլտպրոպ բաժնի ղեկուցումը 1931—32 թ. աշնան ձմեռային կուսակցական ուսուցման արդյունքների ու լենինիզմի մասսայական պրոպագանդի հետագա անելիքների մասին՝ Կենտկոմի բյուրոն արձանագրում է.

1. Վոր 1931—32 թ. աշնան-ձմեռային կուսուսուցման ասպարիզում Հայաստանի կուսակցական կազմակերպությունները ձեռք են բերել զգալի հաջողություններ (բարձրացել է կուսկազմակերպությունների քաղաքական-գաղափարական մակարդակը, հիշված շրջանում գործել են 912 կուսուսուցման միավորներ, 25.985 ունկնդիրներով—վորից 13.000 կուսանդամներ և թեկնածուներ—1931 թ. 13,315 հոգու դիմաց: Մարքս-լենինյան դաստիարակության սխտեմում ընդգրկված է ընդամենը 52 տոկոս, իսկ թեկնածուների 65 տոկոս, պրոպագանդիստական ուժերի աճումը և սրանց վերապատրաստումը, աշխատանքի նոր ձևերի կիրառումը ցանցի վորոշ ողակներում, միջանի շրջաններում կուսակցության թեկնածուների 100%-ի ներգրավումը կուսկրթության ցանցում (Արարան, Բայազետ, Թալին, Գորիս, Ալահվերդի, Աշտարակ և այլն), կոմհամալսարանի կազմակերպումն իր հեռակա և գիշերային

բաժանմունքներով, ամառային ցանցի հաջող ծավալումը տեղերում և այլն):

Սակայն Կենտկոմի բյուրոն նշում է, վոր կուսուսուցման ներկա դրությունը հեռու է կուսակցության աշխատանքների վերակառուցման ետապի և մասսաների կուլտուր-քաղաքական աճող պահանջներին բավարարելուց:

Բյուրոն ընդգծում է, վոր կուսակցական ուսուցման ասպարիզում կան մի շարք կարևոր բացեր ու թերություններ, վորոնցից հիմնականներն են.

ա. Չնայած կուսակցական վերադաս մարմինների դիրեկտիվներին, կուսակցական կազմակերպությունների վորոշ ողակներում (Ղամարլու, Վեդի) ղեռնա նկատվում են մարքս-լենինյան թեորիայի և դաստիարակության ոպորտունիստական թերագնահատման դեպքեր, վորոնց դեմ էլ ծավալված մասսայական բայլեք-վրկյան պայքար:

բ. Կուլտպրոպ և ագիտմաս. բաժինների գործունեությունից անբավարար վերակառուցումը և ոպերատիվ ղեկավարությունից թուլությունը կուսուսուցման ասպարիզում՝ մասնավորապես շրջկոմների կողմից:

գ. Խնքնահոսի առկայություն, դիմադրկություն, կատարվածի թույլ ստուգում և կենդանի մարդկանց վատ հաշվառումն ու հասունությունը կուսուսուցման գծով:

դ. Վոչ բավարար շերտավորված մոտեցում կուսուսուցման ցանցում սովորողներին, ծրագրերի և դասագրքերի հրատարակման գործի անկանոնությունը, կուսակցական-թեկնածուական կազմի վոչ լիովին ընդ-

գրկումը և հոսունությունն ունինդիրների և պրոպ. ուժերի ասպարիզում:

Ե. Ուսման վորակի անբավարար վիճակը, թվերի հետևից ընկնելն ու լենինիզմի խեղաթյուրման և կուսգծի աղավաղման դեպքեր ուսման ցանցում (Արթիկ, Յերևան, Լենինական, Բասարդեհլար, Աշտարակ և այլն):

զ. Թեորիայի վոչ լիակատար շաղկապումը պրակտիկայի և կուսակցության հերթական խնդիրների հետ, պրոպագանդիստական ուժերի տեսական մակարդակի ցածրությունը և նրանց վոչ սխտեմատիկ հաշվառքը և ուսուցումը:

Ե. Միանգամայն անմխիթար վիճակ ունի ազգային փոքրամասնության մեջ գործող կուսակցական ուսուցման ցանցը:

ը. Կուսակցական մարմինների վոչ սխտեմատիկ և անբավարար ղեկավարությունն ու հսկողությունը կոմյերիտմիության մարքս-լենինյան դաստիարակության գործում:

Յեղևելով վերոհիշյալ դրությունից՝ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոն վորոշում է.

1. Համարելով անթույլատրելի կուսուսուցման աշխատանքների ու դերի թերագնահատումը վորոշ կազմակերպությունների կողմից՝ առաջարկել բոլոր քաղկոմներին և շրջկոմներին՝ անողոք պայքար մղել մարքս-լենինյան դաստիարակության դերի և նշանակության ոպորտունիստական թերագնահատման դեմ:

2. Հիշեցնելով այն փաստը, վոր կուսակցական կազմակերպությունները շատ հաճախ ընկնում են թվերի հետևից, և կուսակցական ուսուցման անբավարար վորակի առկայությունը՝ բյուրոն առաջարկում է բոլոր

կուսկազմակերպություններին՝ քանակական աճման գուգընթաց ուշադրության կենտրոն դարձնել մարքս-լենինյան դաստիարակության վորակը, բարձրացնելով այն կուսաշխատանքների վերակառուցման շրջանի պահանջների մակարդակին:

3. Բոլոր քաղկոմներին և շրջկոմներին՝ ամենակարճ ժամանակամիջոցում վերակառուցել կուսուսուցման ցանցի բոլոր միավորների գործունեյությունը, ծանրության կենտրոնը փոխադրելով ցեխը, բրիգադը՝ արտադրական և կուսակցական ստորին միավորները, հատուկ ուշադրություն դարձնելով կենդանի մարդկանց ճանաչման և վերջիններիս բացընկերեն կոփելու կարևորագույն հարցերի վրա:

4. Շրջկոմների և քաղկոմների կուլտպրոպ և ագիտմաս բաժվարներին՝ յերկու դեկադի ընթացքում կազմակերպել պրոպագանդիստական առկա ուժերի լիակատար և ճշգրիտ հաշվառքը, նրանց պատրաստումը և վերապատրաստումը դարձնել սխտեմատիկ: Առնվազմ 15 որը մեկ անգամ հրավիրել պրոպուժերի սեմինարիաներ՝ նրանց տեսական մակարդակը բարձրացնելու և մեթոդական ղեկավարությունն ապահովելու համար:

Ընդգծելով, վոր ուսման վորակը պայմանավորված է պրոպագանդիստների վորակով, բյուրոն կուսկազմակերպությունների ուշադրությունն է հրավիրում պրոպուժերի խիստ ընտրության, նրանց հոգատար վերաբերմունք ցույց տալուն և աշխատանքի մաքսիմալ պայմաններ ստեղծելու խնդրի վրա:

5. Բյուրոն հատկապես ընդգծում է, վոր Հայաստանի կուսակցական կազմակերպությունները դեռ լիովին չեն կիրառել ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի 1931 թ. հոկ-

տեմբերի 31-ի վերջում՝ կուսակցականներին, հասկացողական կուսակցական կոմունիստներին ու նամանավանդ թեկնածուներին, գլխովին կուսուսուցման ցանցում ներգրավելու մասին: Ուստի առաջարկել բոլոր շրջկոմներին՝ մինչև ոգոստոսի 20-ը լայն կերպով ծավալել ամառային կուսակցական ուսուցման ցանցը, ներառելով վերջինում գլուղական բոլոր կուսակցականներին և մշակել կոնկրետ ձևեր վերջինների քաղաքական-գաղափարական կոմպոզիցիոնն հլ ալելի բարձրացնելու համար:

6. Առաջիկա ամռան և աշնան ցանցի կոմպլեկտավորման գործում հանդես բերել առավելագույն դիֆերենցիալ մոտեցում, հաշվի առնելով ունկնդիրների կրթական, քաղաքական մակարդակը, բանվորների հերթափոխությունները, տարբեր արտադրական միավորների առանձնահատուկ պայմանները և անգամ ունկնդիրների բնակարանային յուրահատուկ պայմանները: Տեղական կազմակերպությունները պետք է մինչև վերջն ուղղեն ցանցի կոմպլեկտավորման ասպարիզում կատարված սխալները և վերացնեն նկատվող շարունը:

7. Բյուրոն զգուշացնում է բոլոր կուսկազմակերպություններին, վոր կուսակցական ուսումը պետք է լինի տարվա բոլոր յեղանակներին և յուրաքանչյուր փորձ՝ զանազան կամպանիաների պատրվակով դաստիարակության սիստեմի աշխատանքները կասեցնելու իմաստով, Կենտրոնի կողմից կարժանանա ամենաուժեղ հակահարվածի:

8. Նշելով կուսակցական բարձր և միջին ակտիվ տեսական պատրաստակաությունների գործի անմխիթար վիճակը, բյուրոն առաջարկում է ԿԿ կուլտպրոպ բաժ-

նին՝ մեկ ամսվա ընթացքում մշակել կոնկրետ ծրագիր ակտիվի սիստեմատիկ պատրաստություն համար: Սեպտեմբերին տեղերում հրավիրել ակտիվի սեմինարիաներ և կուսկոնֆերանսներ՝ 17-րդ կուսկոնֆերենցիայի և կուսակցության առաջ ծառացած հերթական խնդիրները մշակելու համար: ԿԿ կուլտպրոպ բաժնին՝ սիստեմատիկ դարձնել կենտրոնի ուժերով ակտիվի համար տեղերում տեսական ղեկուցումներ կազմակերպելը:

9. Բոլոր կուլտպրոպ և ագիտբաժնիներին՝ ավելի լայն ծավալել դաստիարակության ցանցում սոցմոլոգիան ու հարվածայնությունը, մասսայական պաքար ընկ. Սալիկի 6 ցուցումները դաստիարակության ցանցում կիրառելու համար: Սեպտեմբերին կազմակերպել հանրապետական մրցանակաբաշխություն կուսուսուցման գործը որինակելի կազմակերպելու նպատակով:

10. Դաստիարակության ցանցը մեթոդական և ծրագրային ղեկավարությունը ապահովելու նպատակով առաջարկել բոլոր կուսկոմիտեներին՝ կազմակերպել կուսկաբինետներ, և կոմիտեներին կից կազմակերպել կուսուսուցման բյուրոներ և կոնսուլտացիաներ:

Առաջարկել ԿԿ կուլտպրոպ բաժնին՝ յերկու դեկադում կազմակերպել մեթոդ-բյուրո և լեկտորական խմբակներ՝ տեղերի նկատմամբ կոնկրետ ղեկավարություն ապահովելու համար:

11. Բոլոր կուսքաղկոմներին և շրջկոմներին՝ հատուկ ուշադրություն դարձնել նորակառույցների, ՄՏԿ և խորհրտեսությունների բանվորական կազմերի քաղաքական պատրաստման գործի վրա:

12. Կենտկոմի բյուրոն պահանջում է բոլոր կուս-

կոմիտեներից՝ ամենակարճ ժամանակամիջոցում ստեղծել իսկական բեկում կոմյերիտական չեքիտասարդության մարքս-լենինյան դաստիարակության գործում, ոգնելով կոմյերիտմիության կոմիտեներին պրոպագանդիստներով, ապահովելով անհրաժեշտ կուսակցական ղեկավարութունն այդ գծով:

13. Մինչև 1933 թ. հունվարի 1-ը բոլոր շրջաններում պրոպագանդիստների համար բացանել կիսամսյա կամ միամսյա դասընթացներ:

14. Բոլոր կուսկազմակերպութուններին՝ մեկ ամսվա ընթացքում բեկում ստեղծել ազգային փոքրամասնության շրջաններում մարքս-լենինյան դաստիարակության սխեման: Կոպկուլտաոին՝ մեկ դեկադի ընթացքում կարգավորել ազգ. փոքրամասնություններ ունեցող շրջանները գրականութուն առաքելու գործը:

15. Շեշտելով տեղական թերթերի անբավարար մասնակցութունը մարքս-լենինյան դաստիարակության գործում՝ առաջարկել բոլոր թերթերի խմբագրություններին հատուկ և սխեմատիկ ուղադրութուն դարձնել մարքս-լենինյան դաստիարակության խնդիրներին, վերցնելով թեկնածուների ուսուցման տեսական շեֆությունը: Անպայման ունենալ տեսական ուսուցման և կոնսուլտացիայի հատուկ բաժին:

16. Կի կուլտպրոպ բաժնին՝ նախապատրաստական աշխատանք կատարել Լենինականում 1933 թ. հունվարից յերեկոյան կոմհամալսարան կազմակերպելու, ինչպես նաև 3-րդ աստիճանի կուսդպրոցներ ունենալ Աբարանում, Դիլիջանում, Ղափանում և Բայազետում:

17. Առաջարկել կուլտպրոպ և ագիտման բաժնարաններին՝ կարգավորել և ծավալել հեռակա կոմհամալսարանի աշխատանքները:

18. Հոկտեմբերի 13-ից կազմակերպել ակտիվի հանրապետական չեռամսյա ռադիո-դասընթացներ:

19. Արգելել մեկ տարով վարձու պրոպագանդիստներին՝ ուրիշ աշխատանք վերցնելը:

20. Կուլտպրոպ և ագիտման բաժնարաններին՝ հետևել, վորպեսզի կուսուսուցման սխեմանում ապահովվի տեխպրոպագանդի միևնույնի ավանդումը:

21. Բոլոր շրջկոմներին և քաղկոմներին՝ ծավալել նախապատրաստական ձեռնարկումներ 1932—33 թ. աշնան-ձմեռվա ուսուցումն ապահովելու համար: Կուսհրատին՝ տպագրել կուսուսուցման ցանցի նյութերը, այդ գործի համար պատասխանատու դարձնել ընկ. ընկ. Պարիսին և Մարուխյանին:

22. Խիստ հանդիմանութուն անել Ղամարուկի շրջկոմի բյուրոյին և կուլտպրոպբաժնար ընկ. Հովհաննես Պետրոսյանին, 1931—32 թ. աշնան-ձմեռային կուսուսուցման ցանցի աշխատանքները տապալելու համար: Առաջարկել շրջկոմին ձեռք առնել կտրուկ միջոցներ առաջ տանելու մարքս-լենինյան դաստիարակության գործը:

Առաջարկել կուլտպրոպին՝ վերանայելու կուսուսուցման ծրագիրն ու գրականությունն ընկ. Ստալինի պատմական նամակի վրա՝ հատուկ ուղադրութուն դարձնելով կուսպատմության և լենինիզմի ավանդման վրա, ել ավելի սրելով պայքարը զաշնակիզմի և նացիոնալիզմի արտահայտությունների, հակահեղա

փոխական տրոցկիզմի կոնտրաբանդի, աջ և «ձախ»
ոպորտունիզմի դեմ, կոնկրետ պայքար մղելով ցան-
ցում նկատվող՝ լենինիզմի աղավաղման և գոեհակաց-
ման դեպքերի դեմ, ապահովելով չեղկու Ֆրոնտով
պայքար մղելու բալշևիկյան լոզունգի անշեղ կենսա-
գործումը:

24. Հաստատել կուլտպրոպ հանրապետական խոր-
հրդակցության վորոշումները:

ԿՈՄՅՈՒՆԻՍՏԻՈՒԹՅԱՆ ԱԶԱՅՑԵԼՈՒ ԶԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ
ՄԱՍԻՆ

ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոն խոշոր նշանակություն
տալով Համկոմկուսի Կենտկոմի սեպտեմբերի 7-ի վո-
րոշմանը՝ կոմյերիտմիությանն աջակցելու վերաբերյալ,
վորոշում է.

1. Առաջարկել բոլոր կուսքաղկոմներին և շրջկոմ-
ներին՝ բյուրոներում կոմյերիտմիության բյուրոների
հետ միասին քննության առնել վերոհիշյալ վորո-
շումը, մշակել կոնկրետ ձեռնարկումներ այն կենսա-
գործելու համար:

2. Պարտադրել Կենտկոմի քարտուղարներ ընկ.
ընկ. Ոթյանին և Պապիկին, նույնպես բոլոր շրջկոմ-
ների քարտուղարներին՝ պարբերաբար հրավիրել կոմ-
յերիտմիության ղեկավարող ակտիվին և ինֆորմացիա
տալ կուսակցության ու միջազգային քաղաքականու-
թյան կարևորագույն հարցերի մասին:

3. Առաջարկել կազմբաժին հոկտեմբեր—նոյեմբեր
ամիսների ընթացքում ստուգել կուսղեկավարության
դրվածքը, կոմյերիտմիությանը կցված կուսընկերների
աշխատանքները կոմյերիտմիության մեջ, այն հաշվով,
վորպեսզի ել ավելի ուժեղացվի, կոնկրետացվի կուս-
ղեկավարությունը: Կոմյերիտմիության բջիջներին
կցված ընկերները պետք է ունենան մոչ պակաս չեղկու
ոարվա կուստաժ և կուսաշխատանքների անհրաժեշտ
իորձ՝ համաձայն Կենտկոմի սեպտեմբերի 7-ի վորոշման:

և Ղուրդուղուղու շրջկոմներին՝ ապահովել կոմյերիտ-միության կուրսային բաղանիքը վորակյալ դասատու-ներով ու մեթոդիստներով:

7. Առաջարկել կուլտպրոպագանդին և Կուսհրատին՝ մինչև նոյեմբերի 15-ը հրատարակել ԼԿՅՅՄ քաղաքա-գիտության դասագիրքը, նախնական դպրոցների ձեռ-նարկը, կուսակցության, ԼԿՅՅՄ-ի, ԿԻՄ-ի պատմու-թյան ուսումնասիրության և քաղցանցի բոլոր ծրա-գրերն ու նյութերը:

8. Անհրաժեշտ համարել հունվարի 1-ից կոմհամա-լսարանին կից կազմակերպել կոմյերիտական հատուկ խումբ, մեկ տարվա տևողությամբ, 30 ուսանողից՝ կոմյերիտական ղեկավար կադրեր պատրաստելու հա-մար:

9. Հանձնարարել ագիտման և կուլտպրոպագանդին-ներին ԼԿՅՅՄ Կենտկոմի հետ մշակելու կոնկրետ միջո-ցառումներ Համկ(բ)Կ Կենտկոմի սեպտեմբերի 7-ի վո-րոշումը կենսագործելու համար, քարտուղարության հերթական նիստերից մեկում լսել ընթացիկ տարվա պիոներական լազերների կազմակերպման արդյունք-ները. հանձնարարել համապատասխան շրջկոմներին՝ նույնպես քննել վերոհիշյալ հարցը:

ա. Անհրաժեշտ համարել պիոներական լազերների 1933 թ. ծախսերը մոտցնել պետբյուջեի մեջ. առաջար-կել ԼԺԿ-ին Պետպլանի հետ միասին մինչև հոկտեմբե-րի 15-ը վերջնականապես վորոշել պիոներ-կազմակեր-պության 1933 թ. շինարարությանը հատկացվող մի-ջոցները:

գ. Առաջարկել Լուսժողկոմատին՝ մորիլիզացիայի յենթարկել 15 մանկավարժ ընկերներ՝ պիոներ-կազ-

մակերպության ղեկավար աշխատանքի համար: Ընկ. Սանթրոսյանին, Վ. Աստվածատրյանին, Ս. Դավթյա-նին կցել պիոներական կենտրոնական տանը:

11. Հանձնարարել ՀԼԿՅՅՄ Կենտկոմին՝ Հայաստա-նում անցկացնել միասնական միութենական որ՝ քննե-լու Կենտկոմի հոկտեմբերի 31-ի վորոշումների կեն-սագործման ուղղությամբ կոմյերիտմիության կատա-րած աշխատանքները: Այդ որը կապակցել գլուղում կատարվող տնտեսական-քաղաքական կամպանիանե-րին (աշխանացան, հացամթերում, կոլտնտեսություն-ների ամրացում, բամբակի բերքահավաք և այլն): Հանձնարարել շրջկոմներին՝ տրամադրել համապատաս-խան զեկուցողներ այդ որն անցկացնելու համար:

12. Առաջարկել ՀԺԿ-ին և Կոլտնտիկենտրոնին՝ մինչև ապրիլի մեկը կոմյերիտական բրիգադավարներին, կոլ-տնտեսությունների վարչության անդամներին և տրակ-տորիստ կոմյերիտականներին ագրոտեխնիկական գի-տելիքներ տալու համար բոլոր շրջաններում կազմա-կերպել կարճատև դասընթացներ:

13. Առաջարկել Մատթողկոմատին, Հայառին, Հայ-կոռպին, Ժողսնդին, ՀԼԿՅՅՄ Կենտկոմին՝ կազմակեր-պել կոմյերիտական կուրսեր՝ խանութի վարիչներ, գործակատարներ, խոհարարներ պատրաստելու համար (Ֆերևանում՝ 100 հոգուց, Լենինականում՝ 60, Ալլահ-վերդում, Ղարաքիլիսայում և Ղափանում՝ 30, Ստեփան-ավանում՝ 50, Ղուրդուղուղում՝ 20):

14. Գտնել անհրաժեշտ «Կուսշինարարություն» ամ-սագրին կից ունենալ հատուկ բաժին կոմյերիտմիու-թյան աշխատանքների լուսաբանման համար:

15. Հանձնարարել «Ավանդարդին»՝ ուժեղացնելու

գլուղական կոմիտեի տնօրէնութեան աշխատանքները լուսարանումը:

16. Առաջարկել «Խորհրդային Հայաստանին», «Սոց. Գլուղ.»-ին և շրջանային բոլոր թերթերին՝ սխտեմատիկ լուսարանել կոմիտեի տնօրէնութեան աշխատանքները, կուսակալարութեան հարցերը և Համկ(բ)Կ Կենտկոմի սեպտեմբերի 7-ի վորոշման կենսագործման ընթացքը:

17. Հանձնարարել Հկ(բ)Կ Կենտկոմի կազմբաժնին՝ հետեւելու այս վորոշումների կատարմանը և պարբերաբար զեկուցել Կենտկոմի նիստին:

ԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ-ՄԱՍՍՍՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՐՈՒ-
ԹՅՈՒՆԸ ՍՊԱՌԿՈՊԵՐԱՅԻԱՅԻ, ԺՈՂՍՆՆԴԻ ՅԵՎ
ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՊԵՐԱՅԻԱՅԻ ՅԱՆՅՈՒՄ

(ՀԱՍՏԱՏՎԱԾ Ե ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ԲԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ
1932 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-Ի ՆԻՍՏՈՒՄ)

Նշելով վորոշ տեղաշարժեր կուսակազմակերպութիւն-
ների կառուցվածքի վերակառուցման գործում (ստո-
րին ողակի կազմակերպումը, կուսուժերի դասավորու-
մը և այլն), Կենտկոմն արձանագրում է Յերեանի և
Լենինականի քաղկոմների դեռեւս անբավարար աշխա-
տանքը սպառողական և արհեստագործական կոոպերա-
ցիայի ու ժողսննդի ցանցում՝ կուսմասսայական աշխա-
տանքի ծավալման ասպարիզում:

Կոոպերացիայի և ժողսննդի ցանցի կուսակազմակեր-
պութիւնները մինչև այժմ դեռ չեն ծավալել կոոպե-
րացիայի բոլոր ստորին ողակները (խանութները, ճա-
թամբ ամրապնդելու աշխատանքը (խանութները, ճա-
շարանները) (Լենքաղսպառկոոպում 33 կոմունիստնե-
րից միայն 13-ն աշխատում են խանութներում), կո-
մունիստ-կոոպերատորների կադրերի հոսունութիւնը
վերացնելու (յերեք ամսվա ընթացքում Յերեանի քաղ-
սպառկոոպում փոխվել են յերեք կազմբաժնիները),
բարելավելու ստորին կուսողակների (կուսխմբերի,
կուսակազմակերպիչների) աշխատանքի վորակը և բո-
վանդակութիւնը, ընդլայնելու և ամրապնդելու կուս-
շերտը և պատշաճ բարձրութեան վրա դնելու կոմու-

նիստների մարքս-լենինյան դաստիարակության գործը: (Ամառվա ընթացքում վոչ մի խմբակ չի աշխատել):

Կենտկոմը հատկապես նշում է նաև մասսայական-քաղաքական աշխատանքի թուլլ գրվածքը, քաղորդերն անցկացնելու, կուսակցության և կառավարության հիմնական վորոշումները խորհրդային առևտրի, լախսպառի առարկաների արտադրության, բանավորական մատակարարման բարելավման և այլնի մասին լուսաբանելու գործի բացակայությունը:

Կենտկոմը միանգամայն անբավարար է գտնում նաև կուսկազմակերպությունների պայքարն ընդդեմ քայքայված և խորթ տարրերի, ինչպես նաև ընդդեմ ինքնամատակարարման, գողության և հափշտակության՝ կոռուպցիայի և ժողսնդի ցանցում:

Յեկնելով դրանից, Կենտկոմը վորոշում է.

1. Առաջարկել բոլոր քաղկոմներին և շրջկոմներին՝ ձեռք առնել շտապ միջոցառումներ կոռուպցիայում և ժողսնդի ցանցում կուսերում լախնացնելու և ամրացնելու համար, լավագույն բանվորներին և հարվածային աշխատողներին կուսակցության մեջ ընդունելու միջոցով, ինչպես նաև կայուն և ստուգված կոմունիստներին այդ սխտեմին ամրացնելու միջոցով:

2. Վճռականապես դադարեցնել կոմունիստների հոսունությունը կոռուպցիայի և ժողսնդի սխտեմում, ծավալել անողոք պայքար ընդդեմ առանձին կուսակցականների տրամադրությանը՝ հեռանալու կոռուպցիայի սխտեմից, ամրացնելով բոլոր կոմունիստներին իրենց աշխատանքում ավելի չերկար ժամանակով:

3. Կուսուժերի ճիշտ վերադասավորմամբ, վարչական

ապարատից մի շարք կոմունիստների արտադրության մեջ անմիջական աշխատանքի ուղարկելու միջոցով (խանութներում, ճաշարաններում, արտելներում) ապահովել կոռուպցիայի բոլոր ստորին ողակները, հատկապես հացի կրպակները և ճաշարանները, իրական կուսակալավարությամբ (Լենքադսպառկոոպ, Յերեվանի փակ բաշխիչ և այլն):

Միաժամանակ կուսերենավորումների վերաբաշխման միջոցով բոլոր կոմունիստներին ապահովել կուսերենավորումով (Յերեանի փակ բաշխիչներ, Յերկար, Լենկար):

4. Առաջարկել Յերեանի կոմիտեյին՝ վերանայել Յերսունդտրեստի սխտեմի կոմունիստների վերաբաշխումն ըստ բլիջների և լիվիդացիայի լենթարկել այն դրությունը, չեր Ծվեյարոմի ճաշարանի չերկու կոմունիստներ գտնվում են դանազան բլիջներում:

5. Առաջարկել Յերեանի և Լենինականի քաղկոմներին կիպ դեղվել կոռուպցիայի ստորին կուսողակների աշխատանքով: Նոյեմբերին կազմակերպել կոռուպցիայի և ժողսնդի կուսկազմակերպիչների և խմբերացիայի և ժողսնդի կուսկազմակերպիչների, անցկացնել կազմակերպիչների համար սեմինարիաներ, անցկացնել սխտեմատիկ խորհրդակցություններ և հրահանգում՝ լսել նրանց ղեկուցումները թե բլիջների բլուրոցում և թե կազմխորհրդակցություններում և քաղկոմների բլուրոցում, վճռական պայքար մղելով նրանց հոսունությունից դեմ:

Լուծարքի լենթարկել ամրացված կուսկազմակերպիչների սխտեմը ստորին կոռուպցիայի առանձին միավորներում:

6. Վճռական պայքար մղել միանձնյա ղեկավարու-

Թյան բոլոր խախտումների դեմ, ինչպես այդ տեղի ունեցավ Հայտնարկողի ցանցում (Լենկար, Յերկար), կուսկազմակերպութունների հիմնական ուղադրութունը կենտրոնացնելով կազմ. կուսմասսայական աշխատանքի հարցերի վրա:

7. Ստեղծել վճռական բեկում կուսուրերի անցկացման գործում, վերջ դնել այն ինքնահոսին, վոր կա կոոպերացիայի և ժողանդի սխտեմի այդ կարևորագույն աշխատանքում:

Առաջարկել բոլոր քաղկոմներին և շրջկոմներին՝ ուշի-ուշով պատրաստել կուսուրերը, վաղուրոք մշակելով հարցերը կուսխմբում, կոոպերատիվ ստորին ցանցում, տալ լավագույն զեկուցողներ, հատուկ ուշադրութուն դարձնելով կուսժողովների վորոշումներին կատարման վրա:

8. Սխտեմատիկ դարձնել քաղուրերի կազմակերպումը, դարձնելով այն կուսմասսայական աշխատանքի հիմնական մեթոդը: Առաջարկել Կենտկոմի ԱՄԿ բաժնին՝ այդ հարցի մասին տեղերին տալ կոնկրետ ցուցումներ:

9. Կուսչերտի Թուլությունը և կոոպերացիայի ու ժողանդի կուսկազմակերպութունների համեմատաբար չերիտասարդ կազմը հատկապես սուր կերպով պահանջում է կուսակցական-դաստիարակչական աշխատանքի ծավալում:

Առաջարկել Յերևանի և Լենինականի քաղկոմներին, ինչպես նաև բոլոր շրջկոմներին՝ անհապաղ կազմակերպել կուսլուսավորության ցանց (կոոպերացիայի և ժողանդի ցանց) և կարգավորել արդեն կազմակերպված խմբակների պարապմունքները (սխտեմատիկ

պարապմունքներ, պրոպագանդիստների ընտրություն և այլն), ամեն կերպ պայքարելով պարապմունքների խափանման դեմ (Յերկար, Լենկար և այլն):

10. Կոոպերացիայի ցանցի կուսկազմակերպության առաջ զբված հիմնական խնդիրներից մեկը հանդիսանում է վճռական պայքարի ծավալումը ընդդեմ կոոպերատիվային գույքի չարաշահումների, ինքնամատակարարման, գողության և հափշտակության:

Առաջարկել բոլոր քաղկոմներին և շրջկոմներին՝ այս հարցերի շուրջը ծավալել քաղմասսայական լայն աշխատանք և ապարառը սխտեմատիկ կերպով զտեմ լավագույն և խորթ բոլոր տարրերից, ձգտել հասնել կոոպերացիայի և ժողանդի ապարատի հստակ աշխատանքի, մասնավանդ նրա ստորին ողակներում:

Միաժամանակ ձգտել վճռականապես բարելավելու և աշխուժացնելու կոոպերացիայի վերահսկիչ որգաններին (վերստուգիչ հանձնաժողովների) աշխատանքը, հաշվառումը և հաշվետվությունը (պարբերական հաշվետվություններ կոոպերացիայի անդամների առաջ և այլն):

11. Տնայնագործական-արհեստային կոոպերացիայի կուսկազմակերպության առաջ զբված հիմնական խնդիրն է կոոպերացիայի ամբողջ սխտեմի աշխատանքի վերակառուցումը, ԽՍՀՄ ժողկոմխորհի վորոշումների հիման վրա, և լայն սպառման առարկաների արտադրության լայնացումը:

Կենտկոմն առաջարկում է բոլոր քաղկոմներին և շրջկոմներին՝ ոժեղացնել ուշադրությունը դեպի արհեստ. կոոպերացիայի կուսկազմակերպությունների աշխատանքը, վճռական պայքար մղել ընդդեմ բոլոր

ուպորտունիստական տրամադրությունները՝ արդիւն-
ալանները կատարման դժվարությունների, հումքի բա-
ցակալության և ալյւնի մասին, և ամբողջ կուսակազմա-
կերպությունը մոբիլիզացիայի յենթարկելու, կազմ.
կուսամասնական աշխատանքի վերակառուցման տեմ-
պերն ուժեղացնելու, կուսուժերը ճիշտ դասավորելու և
ներքին ռեսուրսներն առավելագուցն չափով մոբիլիզա-
ցիայի յենթարկելու միջոցով, ձգտել լիովին կատարել
լայն սպառման առարկաների արտադրության պլան-
ները մինչև Հայաստանի խորհրդայնացման 12-րդ տա-
րեդարձը:

12. Հանձնարարել կոոպերացիայի, ժողսննդի և Հայ-
տնարկոոպի սիստեմի բոլոր կուսակազմակերպություն-
ներին, վարչությունների հետ միասին, մի դեկադայի
ժամկետում մշակել կոնկրետ ձեռնարկումներ, վորոնք
բղխելու յեն Համկ(բ)Կ Կենտկոմի սեպտեմբերյան պլե-
նումի վորոշումներից, և ապահովել նրանց իրագոր-
ծումը:

ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ԲԵՈՒՐՈՅԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի

ՎՈՐՈՇՈՒՄԸ

1. Թույլ դեկավարության և մթերման պլանը
չկատարելու համար (մինչև դեկտեմբերի 28-ը բամ-
բակ հանձնելու պլանը կատարվել է միայն 56,6 տո-
կոսով) աշխատանքից հանել և խիստ հանդիմանու-
թյուն անել Ղուրդուղուլու շրջգործկոմի նախագահ
Ընկ. Դանիելյանին, շրջկոմի քարտուղար Ընկ. Հակոբ-
ջանյանին և ՄՏԿ-ի գիրեկտոր Ընկ. Արմ. Բոբիկյա-
նին:

Առաջադրել վորպես շրջկոմի քարտուղար Ընկ.
Ն. Նետիսյանին և շրջգործկոմի նախագահ Ընկ.
Ն. Ադոյանին: ՄՏԿ-ի գիրեկտոր նշանակել Ընկ. Միր-
զոյանին:

2. Թույլ աշխատանքի համար՝ մանավանդ գյու-
ղատնտեսական արտադրանքի մթերումների ասպա-
րիզում, զգաւտ չլինելու (հարեցողություն) և կու-
սակցության վստահությունը արդարացրած չլինելու
համար աշխատանքից հանել և կուսակցությանից
վտարել Մարտունու շրջգործկոմի նախագահ Ա. Հարու-
քոյանին:

Առաջադրել վորպես շրջգործկոմի նախագահ Ընկ.
Թ. Թագվորյանին:

3. Թույլ աշխատանքի և գյուղխորհուրդներից
կտրված լինելու համար աշխատանքից հանել Ախտալի

շրջադրվածի նախագահ ընկ. Տ. Ներսիսյանին, խիստ հանդիմանութուն անելով նրան:

Առաջագրել վորպես Ախտայի շրջադրվածի նախագահ ընկ. Ա. Զաքոյանին:

4. Ընկ. Ա. Զաքոյանը այլ շրջան աշխատանքի փոխադրվելու պատճառով, առաջագրել վորպես Իջևանի շրջադրվածի նախագահ ընկ. Մանասեյանին:

5. Սարգստաբաղի բամբակագործական խորհրդատեսության մեջ բամբակի մթերման պլանը խախտողական կերպով վիժեցնելու համար դատի տալ խորհրդատեսության աշխատանքից հանված զիրեկտոր Անդրանիկ Իսկուրցյանին:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍՏՈՐԻՆ ԿՈՒՍՈՂԱԿԻ ՍՏՈՒԴԱՏԵՍԻ
ԱՐԴՅՈՒՆ-ԲՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(ՀԱՅԱՍՏԱՆԻ Կ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՍԻ ԲՅՈՒՐՈՅԻ 1932 Թ. ՀՈՒՆԻՍԻ 21-Ի
ՎՈՐՈՇՈՒՄԸ)

Ամփոփելով արդյունաբերության մեջ ստորին կուս-
ողակի աշխատանքի՝ Կենտկոմի կազմհրահանգական
բաժնի կողմից անցկացված ստուգատեսի արդյունք-
ները (խմբակազմակերպիչների և կուսակազմակերպիչների
հավաքներ և խորհրդակցություններ Յերևանի և այլ
կազմակերպություններում, Լենինականի կոնֆերեն-
ցիան, ստորին ողակի հեռակա խորհրդակցություն),
Կենտկոմն արձանագրում է, վոր Հայաստանի կուսակա-
զմակերպությունները ձեռք են բերել վորոշ հաջողու-
թյուններ Համկոմկուսի (բ) Կենտկոմի հովանավորման
31-ի վորոշումների իրացման գործում՝ ստորին ողակի
ստեղծման, ամրապնդման (կուսակազմակերպություննե-
րի ցանցն արդյունաբերության մեջ, տրանսպորտում
և շինարարության մեջ առ 1/X 1931 թ. — ԲՆԻՋ-
ներ՝ 180, կուսխմբեր և կուսակազմակերպիչներ՝ 495,
առ 1/VI 1932 թ. — ԲՆԻՋներ 273, կուսխմբեր և կուս-
ակազմակերպիչներ՝ 1338) և կուսակցական մասսայա-
կան աշխատանքի ծանրության կենտրոնը ցելս և բրի-
գադ տեղափոխելու ասպարիզում:

Կենտկոմն արձանագրում է զգալի տեղաշարժեր
կուսակազմակերպության աճման քանակական և վորա-
կական ցուցանիշների, կուսակազմակերպության դադա-

փարական-քաղաքական ամրապնդման գործում, պաշ-
քարելով հանուն մասսաներին կուսակցության գլխա-
վոր գծի շուրջը մոբիլիզացիայի լինթարկելու համար
մղվող պաշարում և նշանակելի բեկում կուսակցական-
մասսայական աշխատանքի վերակառուցման մեջ, մա-
նավանդ վերջին ամիսներում:

Սակայն այս նվաճումների հետ միասին դեռևս կան
խոշոր բացեր, ինչպես որինակ, կառուցվածքային բնույ-
թի սխալներ (Յերևան—Մելիգործարանի, Հայտնար-
կոոպի և այլ կուսկազմակերպությունները), վերակա-
ռուցման դեռևս դանդաղ տեմպը, ձևական կողմով տար-
վելը, հաճախ կուսուժերի անձիշտ դասավորումը, կո-
մունիստների թույլ ընդգրկումը քաղուսուցման մեջ,
տնտեսավարի փոխարինումը և այլն:

Խոշոր բաց է դեռևս կուսօրգովների պատրաստման
և վորակի հարցը, կուսբեռնավորումների բաշխումը,
թեկնածուների մեջ կատարվելիք աշխատանքը, բանվոր
պրոպագանդիստին ոգնելու գործի կազմակերպումը,
մասսայական բացատրական աշխատանքի ուժեղացու-
մը, հաճախ բանվորներին հետաքրքրող սուր հարցերի
կողքով անցնելը, ստորին ողակին ոգնելու գործի կազ-
մակերպումը կուսբջիջների և կուսկոմների կողմից:

Յեկնելով վերոհիշյալից, կենտկոմը վորոշում է.

1. Հանձնարարել կենտկոմի կազմհրահանգչական
բաժնին՝ լինելով ստուգատեսի հայտարարած նվա-
ճումներից և բացերից և կազմ. կուսակցական-մասսա-
յական աշխատանքի վերակառուցման հանգուցային
հարցերից, վորոնք նշված են «Բայշլեիկ» ժուռնալի
առաջնորդողում և Համկոմիուսի (բ) կենտկոմի հայտնի

վորոշումներում, ծավալել ձեռք բերված հաջողություն-
ների ամրապնդման աշխատանքը, բարձրացնել ստորին
ողակի աշխատանքի վորակը և բովանդակությունը,
ամրացնել կուսխմբերը, բարձրացնել և խորացնել կուս-
մասսայական աշխատանքը կուսակցության և բանվոր
դասակարգի շարքերը լրացնողների մեջ:

2. Յեկբջիջների քարտուղարներին, խմբկազմակեր-
պիչներին և կուսկազմակերպիչներին սխտեմատիկ ոգ-
նելու և հրահանգելու համար անհրաժեշտ է, վորպեսզի
ձեռնարկությունների կոլբյուրոները և կուսկոմներն
առավելագույն չափով կենտրոնացնեն իրենց աշխա-
տանքները և իրենց ուժերն անմիջականորեն ցեխե-
րում, բարելավելով չուրաքանչյուր ցեխային բջիջի,
նրա բյուրոյի, ցեխային ժողովների աշխատանքը, ա-
յանովելով ցեխային բջիջների դերի ուժեղացումը
կահովելով ցեխային բջիջների պաշարական կյանքի ղեկավար-
ների կուսակցական-քաղաքական կյանքի ղեկավար-
ման գործում, ձգտելով, վոր չուրաքանչյուր ցեխբջիջ
կարողանա կազմակերպել և ուղղություն տալ կուս-
խմբի աշխատանքին և կոմունիստական աղղեցությամբ
ընդգրկել բոլոր բանվորներին:

3. Գործարանի, ֆաբրիկայի, լեկաթուղու և այլ
կուսկազմակերպությունները, առանց խախտելու մի-
անձնյա ղեկավարությունը ձեռնարկության մեջ, ցե-
խում և բրիգադում, առանց թույլ տալու փոխարինել
տնտեսական ղեկավարությունը, առանց զբաղվելու
տնտեսական և պրոֆմիութենական բնթացիկ մանր
գործերով, պետք է իրագործեն կուսակցական վերա-
հսկողությունը, հսկողությունը և ղեկավարությունը
կուսակցության գիրեկաիվների կատարման վերաբեր-
մամբ՝ ձեռնարկության կյանքի բոլոր բնագավառնե-

ըում, վորպես հիմնական խնդիր ունենալով ձեռնարկությունների արդիինպանների կատարման ապահովումը:

4. Անհրաժեշտ է պրակտիկայում չխառնել կուս-
խմբերի ֆունկցիաներն արտադրական խորհրդակցու-
թյունների ֆունկցիաների հետ, նրանց առաջ դնելով
կուսդատարակչական աշխատանքի, խմբական ազի-
տացիայի, մասսաների տրամադրությունների, կարիք-
ների և պահանջների հաշվառման և նրանց արձագան-
քելու, վարպետի, բրիգադիրի, պրոֆկադմակերպչի
աշխատանքին ոգնելու խնդիրը:

5. Կադմակերպել և շերտավորված անցկացնել աշխատանքը ցեխըջիջներև քարտուղարներև, աղիտմասսայական և կուլտուր-պրոպագանդիստական աշխատանքներև ղեկավարներև, կուսկադմակերպիչներև, ցեխկոմիտեներև նախագահներև և պրոֆկադմակերպիչներև, ԼԿՅՆՄ քարտուղարներև, պատգամավորական ժողովներև ղեկավարներև, պատի թերթերև խմբագիրներև հետ և այլն, ձգտելով, վոր նրանք լավագույն կերպով յուրացնեն կուսակցության կողմից դրված խնդիրները, ուսումնասիրեն բանվորներին, հմուտ, համառ և ամենորյա բացատրական աշխատանք կատարեն բանվորներև մեջ՝ կուսակցության քաղաքականության 'և ձեռնարկումներև մասին, ապահովելով ամեն տեսակի թշնամական լեւուլթներև, ամեն տեսակի մանր բուրժուական տրամադրություններև մերկացումը և հակահարվածը նրանց դեմ:

Ծ. Առաջարկել բոլոր շրջկոմներին՝ վճռականորեն վերջ տալ կուսակազմակերպչներին և խմբակազմակերպչներին կազմի հոսունությանը և ծավալել կուրս-սեմի-

Նալննրի ցանց ստորին կուսակալիլի պատրաստման
և վերապատրաստման համար:

Առաջարկել Կենտկոմի կուլտպրոպագանդային և Ֆերե-
վանի քաղկոմին՝ յերեկոյան կոմբոհին կից կազմա-
կերպել մի սեկցիա ստորին կուլտուրայի համար:

7. Բոլոր շրջկոմներին՝ մինչև հուլիսի վերջը անցկացնել բոլոր կոմունիստների կուսբեռնավորումների ուսումնասիրման և վերանայման աշխատանքը, ոգտագործելով կուսբեռնավորումների բաշխման գործը՝ ակտիվացնելու և բալլելիկորեն դաստիարակելու կուսակցական մասսաներին, ձգտելով ներգրավել կուսակցության բոլոր անդամներին և թեկնածուներին գործնական կուսակցական աշխատանքում և ամեն կերպ բարձրացնելով կոմունիստի ավանգարդային դերն արտագրության մեջ:

8. Ժողովներում քննվելիք հարցերն ուշի-ուշով նախապատրաստելու և սոցիալիստական շինարարութեան հարցերին կապակցելու միջոցով, դնելով ազդեցութեան քննարկումը սկզբունքային-քաղաքական բարձրութեան վրա, ձգտել վճռական բեկում ստեղծելու կուսակցական դաստիարակութեան ամենակարևոր ձեռք բերից մեկը — կուս֪ողովների վորակի բարձրացման գործում:

9. Արդյունաբերութեան կուսակազմակերպութիւնների աշխատանքում կարեւորագոյն խնդիր ե հանգիստանում բանվորական մատակարարման ամեն կերպ բարեկալման ե կոոպերացիայի ու մատակարարող որգանների կուսակազմակերպութիւնների աշխատանքի զաննների կուսակազմակերպութիւններում ե բռաշխուժացման հարցը: Կենտկոմն առաջարկում ե բոլոր շրջկոմներին՝ մեծ ուշադրութիւն դարձնել կուս-

կազմակերպությունների ընդլայնման և ամրապնդման վրա կոոպերացիայում և մատակարարման որգաններում, աշխուժացնել և վերակառուցել նրա բոլոր ողակները Համկոմկուսի (բ) Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի ու Համկ(բ)Կ ԿԿ և ԿՎՀ-ի հոկտեմբերյան պլենումի վորոշումների հիման վրա:

10. Հավանություն տալով Յերևանի տպարանի կուսկազմակերպության գիմումին և Լենդեպոյի ձեռնարկումներին՝ գյուղին կոնկրետ ոգնություն ցույց տալու, կուսաշխատանքի վերակառուցման և ստորին կուսողակի ամրապնդման ասպարիզում, Կենտկոմն անհրաժեշտ և համարում հատուկ ուշադրություն դարձնել գյուղ ուղարկվող կուսկազմակերպիչների բրիգադների ընտրման և նրանց պատրաստման ու հրահանգման վորակի վրա:

Գյուղական կուսկազմակերպությանն ոգնելու կարևորագույն խնդրը պետք և հանդիսանա Համկոմկուսի (բ) Կենտկոմի փետրվարի 4-ի և մայիսի 15-ի վորոշումների իրագործումը—«կուսուժերի և կոմյերիտական ուժերի դասավորման մասին կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում» և Համկոմկուսի (բ) Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի վորոշումը հացամթերումների, անասունների մթերումների և կոլտնտեսային առևտրի մասին:

11. Կուսուսուցումը վճռականորեն բարելավելու համար ձգտել լավագույն կերպով կատարելու պրոպագանդիստների ընտրումը, սխտեմատիկ կերպով սաուգելու նրանց աշխատանքը, վճռական պայքար մղելով պարապմունքների խափանման դեմ և բարելավելով կուսուսուցման վորակը:

12. Առաջարկել Կենտկոմի կուլտպրոպին և Կուսհրատին՝ մի ամսվա ընթացքում հրատարակել միշարք մատչելի բրոշյուրներ ստորին կուսողակի համար:

13. Նշելով զգալի բեկում «Խ. Հայաստանի», «Սոց. Գյուղ.»-ի, ինչպես նաև բոլոր շրջանային թերթերի կուսբաժնի աշխատանքում՝ կուսակցական շինարարության հարցերի լուսաբանման տեսակետից, Կենտկոմն անհրաժեշտ և համարում այդ աշխատանքների հետագա խորացումը, կազմ. կուսամասսայական աշխատանքի առանձին կարևորագույն հարցերի մշակման և ստորին կուսողակի փորձի փոխանակումը լավագույն կերպով կազմակերպելու տեսանկյունից, մանավանդ գյուղում:

Կենտկոմը հատկապես արձանագրում և, վոր կուսակցական կազմակերպությունների և բլիշների ամբողջ աշխատանքում հատուկ ուշադրություն պետք և կենտրոնացվի կուսակցության մարտական խնդրների վրա. կոմունիստների և բանվորական մասսաների մոբիլիզացիան ընկ. Ստալինի 6 ցուցումների կատարման շուրջը, պայքարելու հնգամյակի ավարտական տարվա արդֆինալանի կատարման համար, վերացնելու խոտանը և պարապուրդները, պայքարելու բանվորական մատակարարման լավագույն կազմակերպման, խորհրդատակաբարման լավագույն կազմակերպման, ԽՍՀՄ միջադյին-կոլտնտեսային առևտրի ծավալման, ԽՍՀՄ միջադյան դրության լուսաբանման և լերկրի պաշտպանունակության ամրապնդման համար:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿՈՄՈՒՆԻՍՏԻ ԱՎԱՆԳԱՐԴԱՅԻՆ
ԴԵՐՆ ԱՏՈՒԳԵԼՈՒ ԸՆԹԱՅՔԻ ՄԱՍԻՆ

Կենտկոմը նշում է, վոր մի շարք ձեռնարկություններում (Լենդեպո, Տեքստիլ, Կարբիդի գործարան, Ալլանդերգոս պղնձահանքեր և այլն) արտադրության մեջ կոմունիստի ավանդարդային դերի ստուգումը զրական կերպով անդրադարձավ վոչ միայն կոմունիստ բանվորներին, այլև անկուսակցականների արտադրական հնտուղիագմի բարձրացման վրա:

Արգֆինպլանի հիմնական ցուցանիշների կատարման գործում կատարված նկատելի բեկման հետ միասին, հատկապես չեղածությունը տրանսպորտում, ինքնաստուգումը մտքերեց նաև մեծ աշխուժություն կուսակցական-կազմակերպչական և մասսայական աշխատանքում (կոմունիստների կապի և մասնակցության ուժեղացումը կուսաշխատանքում, կուսուժերի վերադասավորումը և այլն), ել ավելի բարձրացրեց կուսակցության հեղինակությունը անկուսակցական բանվորական մասնանքների մեջ և ուժեղացրեց նրանց ձգտումը դեպի կուսակցությունը (Լենդեպոյում ստուգման ընթացքում մի բջիջում տրված է 12 դիմում կուսակցության մեջ ընդունվելու մասին):

Դրա հետ միասին Կենտկոմը նշում է, վոր ինքնաստուգման նախապատրաստական աշխատանքները կատարվել են անբավարար: Դեռևս բավարար չափով հաշվի չի առնված ուրիշ կազմակերպչությունների

փորձը, վորի հետևանքով տեղի ունեցան մի շարք սխալներ, վորոնք են.

1. Միջանի բջիջներ չկարողացան ստեղծել ընկերական անհրաժեշտ պայմաններ ստուգվող կոմունիստների համար: Տեղի ունեցան զտման մի շարք մոմենտներ, տեղեկացներ՝ անպայման ընկերներին չենթարկելու կուստույժերի (ընթացիկ վերանորոգման բջիջում 38 ստուգվողներից 8 ընկերներ ստացան կուստույժեր, չերեմնե հառաջ են քաշվում մանր կենցաղային հարցեր):

2. Բջիջները համարյա թե չեն տալիս վոչ մի ցուցում ստուգվող ընկերներին և կոնկրետ պարտավորություններ չուրաքանչյուր կոմունիստի հետագա աշխատանքի համար և ստուգման ավարտումից հետո չեն ամփոփում աշխատանքի արդյունքները, համապատասխան չեղրակացություններ անելով չուրաքանչյուր բջիջի հետագա աշխատանքի վերաբերմամբ:

3. Գոյություն են ունեցել կամպանիականության տարրեր՝ կուսակցական-մասսայական այդ կարևորագույն աշխատանքում:

Կենտկոմը վորոշում է.

1. Առաջարկել Լենինականի և Յերևանի քաղկոմներին, ինչպես նաև արդյունաբերական ռաջոններին շրջկոմներին՝ ել ավելի ուժեղացնել ղեկավարությունը արտադրության մեջ կոմունիստի առաջատար դերի ստուգման նկատմամբ, վերջ տալ բոլոր այն տեղեկացներին, վորոնք ձգտում են ստուգումը վերածել զրաման: Ստուգումը պետք է ընդգրկի կոմունիստի առաջատար դերի, վորպես արտադրական-հասարակական աշխատողի հարցերը և վոչ թե մանր-կենցաղային

կոնկրետ ղեկավարութիւնը՝ Կարբիդի գործարանի կուս-
բջիջի աշխատանքներն ըստ ելութեան վերակառուցելու
գործում:

Վերը հիշված թերութիւնները վերացնելու հա-
մար Կենտկոմն առաջարկում է.

1. Կարբիդի գործարանի կուսբջիջի բյուրոյին՝ ամե-
նակարճ ժամանակամիջոցում կատարել շրջադարձ դեպի
կուսխմբակ, ապահովելով լիարդուն կուսակցական
կյանքը խմբակում: Պարբերաբար բյուրոյի, բջիջի
նիստերում լսել կուսխմբակավարների, կուսկազմակեր-
պիչների ղեկուցումները՝ կուսխմբակի, բրիգադի կուս-
մասսայական աշխատանքների դրվածքի մասին. դեկա-
դում մեկ անգամ հրավիրել կուսխմբակավարների,
կուսկազմակերպիչների հրահանգչական խորհրդակցու-
թիւն՝ ցույց տալով կոնկրետ ոժանդակութիւն, խո-
րացնելու կուսմասսայական աշխատանքները կուսխմ-
բակում, բրիգադում. լավագոյն կուսխմբակի ղեկան
փորձը փոխադրել մյուս կուսխմբակները:

2. Բջիջի բյուրոյին՝ 5 որվա ընթացքում վերանա-
յել կուսխմբակավարների, կուսկազմակերպիչների բեռն-
վածութեան հարցը, ազատելով նրանց ուրիշ պար-
տականութիւններից, ընթացիկ մասն առնուսական
խնդիրներով զբաղվելուց:

3. Բոլոր կուսխմբակներին՝ կազմել խմբակի աշխա-
տանքների կոնկրետ ծրագիր՝ կապելով կուսխմբակի
առաջ դրված կոնկրետ խնդիրները տվյալ ցեխի և ամ-
բողջ գործարանի ընդհանուր խնդիրների հետ:

4. Առաջարկել բջիջի բյուրոյին՝ հալոցքի ցեխերում
կազմակերպել ցեխային պատի թերթերի հրատարա-
կումը:

5. Բջիջի բյուրոյին՝ առանձնահատուկ ուշադրու-
թիւն դարձնել կուսորվա նախապատրաստման և կազ-
մակերպման վրա: Վորպես կարգ՝ ցերեք որ առաջ մինչ
կուսորվա հրավիրումը որակաբար հարցերը մասսայա-
կանացնել բոլոր ցեխերում:

6. Բյուրոյին՝ հրավիրել կուսթեկնածուների հաճա-
խակի խորհրդակցութիւններ՝ քննութեան առնելու
կուսշինարարութեան խնդիրները՝ կապված կուսթեկնա-
ծուների պատրաստման և դաստիարակման խնդիրնե-
րի հետ:

7. Հանձնարարել բջիջի բյուրոյին՝ ցերեք որվա
ընթացքում վերանայել գոյութիւն ունեցող կուսպար-
տականութիւնները բաշխումը և կատարել նպատա-
տականութիւնները բաշխումը, պարբերաբար ստուգելով
կահարմար վերաբաշխում, պարբերաբար ստուգել ու
կուսպարտականութիւնները կատարումը՝ ստուգել ու
ճանաչել կուսանդամին և թեկնածուին՝ նրա կատարած
փաստական գործով:

8. Հանձնարարել բջիջի բյուրոյին և ազիտմաս-
սեկտորին՝ ունենալ գործարանի ցեխերում հաճախակի
թուլցիկ միտինգներ քաղաքական ընթացիկ մոմենտի
և գործարանի արտադրական կյանքին վերաբերող
հարցերի առթիւ:

9. Արձանագրել, զոր գործարանի շարժաբեր փոկե-
րի (կոմյերիտմիութիւն, պրոֆկազմակերպութիւն) աշ-
խատանքներում նկատվում է ֆուսկցիաների շփոթու-
թիւն: Առաջարկել բջիջի բյուրոյին՝ վերակառուցել
վերոհիշյալ կազմակերպութիւնների աշխատանքը՝
կուսաշխատանքների վերակառուցման սխեմով:

10. Քանի անթուլատրելի կուսածուին անդրա-
գետներին կատարելու դեպքերը, հանձնարարել բջիջի

բյուրոյին և բջիջի կուլտուրային՝ ձեռք առնել անհրաժեշտ միջոցառումներ՝ ամենակարճ ժամանակամիջոցում (մեկ ու կես ամիս) կազմակերպել նրանց անգործ գիտությունը վերացնելու գործը:

11. Հանձնարարել գործարանի վարչությանը, կուլտուրային և գործարկումին՝ ուժեղացնել ղեկավարությունն տնտեսաշարժական բրիգադներում, համապատասխան աշխատանք կատարել այն հաշվով, վորպեսզի մինչև հունիսի 20-ը գործարանը վերածվի համատարած տնտեսաշարժական բրիգադների ձևնարկության:

12. Բյուրոյին, կուսկազմակերպիչներին և խմբակավարներին՝ իրենց առօրյա աշխատանքներում ստուգել կուսանդամների և թեկնածուների որինակելի և ավանդարդային դերն արտադրության մեջ: Այդ նպատակով անցկացնել ստուգատես:

13. Նկատողություն անել կազմհրահանգչական բաժնի կողմից ուղարկված կուսխմբակին՝ նրա միանգամայն անբավարար աշխատանքի համար: Տվյալ կուսխմբակի աշխատանքը ցույց է տալիս, թե ինչպես չի կարելի ուսումնասիրել և ոգնել կուսբջիջին նրա աշխատանքը վերակառուցելու համար:

Կազմհրահանգչական բաժնի կողմից միջոցներ ձեռք առնել՝ բարձրացնելու հրահանգչական աշխատանքների վորակը:

ԱՐԹԻԿԻ ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՈՑԿԱԶՄԻ ՅԵՎ
ՍՃՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

(ՀԿ(Բ)Կ ԿԿ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ 1932 Թ. ՀՈՒՆԻՍԻ 18-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

Արձանագրել, վոր կուսշինարարության, մասնավորապես կուսաճման և սոցկազմի կարգավորման ասպարիզում, համեմատած 1931 թ. հետ, Արթիկի շրջկոմը և բերել վորոշ հաջողություններ: Առ 1-ը հունվարի 1931 թ. կազմակերպությունն ունեցել է 633 անդամ-թեկնածու, իսկ առ 1-ը հունիսի 1932 թ.՝ 900 անդամ-թեկնածու: 1932 թ. ընթացքում ընդունված 148 հոգուց 113-ը բանվորներ են:

Այս բոլորի հետ միասին Արթիկի շրջկոմի աշխատանքներում նկատվում են հետևյալ խոշոր թերությունները:

ա. կուսակցության անբավարար աճումը շրջանի արտադրական ձեռնարկություններում (Արթիկ-Տուֆ, Անի, չերկաթուղի):

բ. Անբավարար աշխատանքը թեկնածուների, մասնավորապես ռեզերվի մեջ, բացակայում են վերջինիս սխառեմատիկ ուսումնասիրությունը և կուսակցության մեջ կազմակերպված ներգրավումը:

գ. Բացակայում է կուսհաշվառումը շրջկոմում:

դ. Ընդունելությունների ընթացքում թույլ են տրված խեղաթուրումներ, կոլբյուրոներին կից կազմակերպվել են ընդունող հանձնաժողովներ, վորի հետևանքով մեխանիկորեն վերացվել է շրջկոմին կից

ընդունող և փոխադրող հանձնաժողովը, ընդունելով թյուրմաները ձգձգվել են և այլն:

Յեկնելով դրանից, կազմխորհրդակցությունն առաջարկում ե.

1. Ամենակարճ ժամանակամիջոցում կազմակերպչական, կուսմասնաշաղկապ աշխատանքների վերակառուցման հիման վրա ծավալել աշխատանքը բանվորների և բանվորուհիների, կոլտնտեսականների մեջ, առանձնապես կուսակցության ղեկավարի մեջ, վերջ տալով կամպանիոն ընդունելություններին. սխտեմատիկ ուսումնասիրության, մարքս-լենինյան դաստիարակության ուժեղացման միջոցով ապահովել հարվածային բանվորների, բաղրակների և լավագույն կոլտնտեսականների ներգրավումը կուսակցության շարքերն այն հաշվով, վոր նոր ընդունված թեկնածուների մեջ արտադրական բանվորներն ու բանվորուհիները կազմեն 80%-ը՝ համաձայն Հայկոմկուսի Կենտկոմի վորոշման:

2. Հատուկ ուղադրություն դարձնել և ԼԿՅԵՄ շըրջկոմի միջոցով արտադրական ու քաղաքատարակչական աշխատանք ծավալել մեծահասակ կոմյերիտականների մեջ՝ ընդգրկելով նրանց հարվածայնության մեջ, բարձրացնելով նրանց ավանդադասին դերն արտադրության մեջ և ըստ այնմ առանց ուղացումների նրանց ընդգրկել կուսակցության շարքերը:

3. Նկատի ունենալով, վոր կազմակերպության 901 անդամ-թեկնածուների միայն 49 հոգին—կամ 5,90%-ն են կազմում կանայք՝ անհրաժեշտ համարել, վորպեսզի առաջիկա լեռամսյակներին շըրջկոմի կազմաթիւնն ու կիւն-սեկտորը հատուկ աշխատանք ծավալեն բանվորու-

հիւների ու կոլտնտեսուհիների մեջ, ուսումնասիրեն պատժողովների մեջ չեղած հասարակական աշխատանքի լծված կանանց ակտիվը, արագացնելով նրանցից լավագույններին, կոլտնտեսության դաշտերում աշխատող հարվածայիններին կուսարքերում ընդգրկելու աշխատանքը:

4. Արթիկի կուսկազմակերպության մեջ թեկնածուների բարձր տոկոսը (կազմակերպության 901 հոգուց 369-ը՝ 40,90% թեկնածուներ են) և դեռևս 1926—27—28 թվերից ընդունված թեկնածուների առկաությունը հրամայական պահանջ են դնում կուսշըրջկոմի առաջ առաջիկա ամիսների ընթացքում հատուկ ուղադրություն դարձնել թեկնածուների մեջ աշխատանք ծավալելու ուղղությամբ, վորի համար՝

ա. թեկնածուներին լիովին ընդգրկել քաղցանցում և ապահովել թեկնածուական քաղցանցի նորմալ, առանց ընդհատումների աշխատանքը և պարապմունքների հաճախումը 100 տոկոսով:

բ. Բոլոր թեկնածուներին ընդգրկել գործնական աշխատանքների մեջ, տալ նրանց կուսակցական ծանրաբեռնվածություն և հետևել, վոր նրանք կանոնավոր կերպով հաճախեն կուսժողովները. ամեն կերպ ոգնել նրանց՝ բարձրացնելու իրենց ակտիվությունը կուսակցական կյանքում և առաջատար դերն արտադրության մեջ:

գ. Կուսխմբակներում թեկնածուների մեջ հատուկ աշխատանք ծավալել, վորի համար հրահանգել կուսխմբակների կազմակերպիչներին՝ ուսումնասիրել թեկնածուներին և թեկնածուական ստաժն անցկացրածներին արագ կերպով փոխադրել կուսանդամ:

5. Վերացնել Արթիկ-Տուֆի, Անի-Պեմզայի կոլբյուրոններին կից կազմակերպված կուսարժեքն ընդունող և փոխադրող հանձնաժողովները, աշխուժացնել շրջկոմի ընդունող և փոխադրող հանձնաժողովի աշխատանքները, Արթիկ-Տուֆում, Պեմզայում և խոշոր կոլտնտեսություններում պարբերաբար հրավիրել հանձնաժողովի նիստեր:

6. Առաջարկել շրջկոմին՝ կարճ ժամանակամիջոցում կարգավորել կուսկազմակերպության հաշվառման գործը, լրացնել անդամների և թեկնածուների պակաս քարտերը, շրջկոմում հաշվառման գործը կարգավորելու համար պահել հատուկ աշխատակից:

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԴԵՊՈԶԻ ՄԱՍԻՆ

(ՀԿ(Բ)Կ ԿԿ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ 1932 թ. ՀՈՒՆԻՍԻ 18-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ)

Արձանագրել, ՎՈՐ Անդրյերկաթուղիների 4-րդ ունիոնի և Լենինականի դեպուի կողմից ներկայացված տվյալները զուգերթի 92—94 տոկոսի կենսագործման մասին՝ փաստորեն նշանակելի չափով ավելի պակաս կատարման պարագայում, հանդիսանում են կուսակաթյան և կառավարության կողմից զուգերթի մացության և կառավարության կողմից զուգերթի մասին տրված դիրեկտիվների ելությունը չհասկանալու արդյունք, այդ դիրեկտիվների կոպիտ աղավաղում և խեղաթյուրում, չոր-պաշտոնական, զբաղեցված և բյուրոկրատական մոտեցում այդ պատասխանատու գործին:

Զուգերթի կատարման մասին բազմաթիվ իրար հակասող տվյալների գոյության փաստերը խոսում են զուգերթի ռեալ իրագործմանը ցույց տրված ձևական, անպատասխանատու վերաբերմունքի մասին՝ կուսակաթյան դիրեկտիվի լիակատար իրականացման համար իսկական բալլերիկյան պայքարի բացակայության, զուգերթի հաշվառման մեջ գոյություն ունեցող խառնաշփոթության մասին:

Կենտկոմը նշում է, ՎՈՐ դեպուի կուսակցական, պրոֆ. և կոմյերիտական կազմակերպությունները բավարար չափով մոբիլիզացիայի չեն յենթարկվել զուգերթի իրագործման, շոգեքարշային բրիգադների մըշտականության համար վճռական պայքար մղելու հար-

ցի շուրջը: Վոչ-քննադատական վերաբերմունքը դեպի
զուգերթի ներկայացված վոչ-իրական «բարձր» տո-
կոսները՝ հանգստացրել են դեպույի կազմակերպու-
թյանը և բթացրել կուսկազմակերպության աչալըշուրթու-
նը, արգելք են հանդիսացել բալլեիկյան ինքնաքննա-
դատության ծաւալման գործին:

Ներքի խեղաթյուրումներն անհապաղ վերացնելու նպատակով Կենտկոմը վորոշում է.

նին հանելու մասին, և 4-րդ ռաչոնի ղեկավարութեան ձեռնարկումներին՝ ուղղելու թույլ տրված սխալները և հանցավորներին լեռնարկելու պատասխանատվութեան:

5. Առաջարկել դեպոյի պետ ընկ. Գրիգորյանին՝ անհապաղ վերանայել դեպոյի հաշվառման ապարատի աշխատողների ամբողջ կազմը, ճշտել զուգերթի և հիվանդ շոգեքարշերի հաշվառման մեթոդը՝ զուգերթի հաշվառման և հիվանդ շոգեքարշերի տոկոսի մասին չեղած լեռնարկումներին վերջին կանոնադրութեան հիման վրա:

6. Կենտկոմը հրավիրում է Լենինականի քաղկոմի և դեպոյի կուսկոմի ուշադրութիւնը դեպոյում բայելե-վիկյան ինքնաքննադատութեան անբավարար ծավալման վրա, վորն արգելք է հանդիսանում մասսաների լայն մոբիլիզացիայի և դաստիարակման գործին:

ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ԲԶԻՋՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ԱԼԼԱՀՎԵՐԴՈՒ ՇՐՋԱՈՄԻ
ԿԱՏԱՐԱԾ ՍԵՍԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(ՀԿ(Բ)Կ ԿԿ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ 1932 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 26-ի
ՎՈՐՈՇՈՒՄԸ)

Կենտկոմն արձանագրում է, վոր Ալլահվերդու շըր-ջանային կուսկոմիտեն հենակետային բջիջներ կազմա-կերպելու գործում թույլ է տվել մի շարք կոպիտ սխալ-ներ:

Հենակետային բջիջների յեն վերածել վոչ միայն խորհրդային տնտեսութուններին և խոշոր կոլտնտեսու-թյուններին կից բջիջները, այլև գյուղական սովորա-կան բջիջները, որինակ, Դսեղի բջիջը, վորտեղ կուսակ-ցական աշխատանքների դրվածքը չեղել է միանգա-մայն անբավարար:

Յեւնելով դրանից, Կենտկոմը վորոշում է.

1. Առաջարկել Ալլահվերդու շըրկումին՝ Ուզունլարի, Դսեղի և Շնողի բջիջները, վորպես հենակետային, վե-րացնել, վերածելով աչդպիսիները գյուղական բջիջ-ներին:

2. Շըրկոմի կազմհրահանգչական բաժնին՝ առանձ-նահատուկ ուշադրութիւն դարձնել Դսեղի բջիջում նկատվող հիվանդագին լերեւելթների անհապաղ վե-րացման վրա:

3. Կենտկոմը կրկին անգամ հիշեցնում է, վոր շըր-

ջանացին կոմիտեներն անհրաժեշտ ուշադրություն
չեն դարձնում հենակետային բջիջների ընտրություն,
ներանց աշխատանքների իրական վերակառուցման վրա:
Շրջանային կոմիտեներին՝ հինգ որվա ընթացքում
վերանայել բոլոր հենակետային բջիջները՝ այդ աս-
պարիզում թույլ տված սխալներն անհապաղ վե-
րացնելու և կուսկոմիտեների ղեկավարությունն ուժեղաց-
նելու նպատակով:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՇՐՋԱՆԻ ԿՈՒՍԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(ՀԿ(Բ)Կ ԿԿ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ 1932 Թ. ՀՈՒՆԻՍԻ 9-ի
ՎՈՐՈՇՆՈՄԸ)

Քննելով Վաղարշապատի կուսըջկոմի քարտուղար
ընկ. Համունու և Կենտկոմի պրոպագանդայի գեկուցու-
մը շրջանի կուսլուսավորության ցանցի վիճակի մա-
սին՝ ԿԿ քարտուղարությունն արձանագրում է.

Ձայած այն իրողության, վոր ուսումնական տար-
վա սկզբին Վաղարշապատի շրջանային կոմիտեն ժա-
մանակին ձեռնարկեց կուսակցական դաստիարակու-
թյան գործին, սակայն հետագայում նշված աշխա-
տանքները փաստորեն կազմալուծվեցին շրջկոմի անու-
շադրության հետևանքով: (Կուսլուսացանցը փետրվարից
դադարել է գործելուց): Քարտուղարությունը մատնա-
նշում է, վոր կուսակցական մասսայական կրթության
գործի նման դատապարտելի ձախողումը գերազանցա-
պես արդյունք է Վաղարշապատի կուսըջկոմի, հատ-
կապես ագիտման և կազմաթիւնների, դեպի կուսմաս-
սայական դաստիարակչական աշխատանքներն ունե-
ցած ոպրտունիստական վերաբերմունքի: Կուսդաս-
տիարակչական աշխատանքների այս դրությունն ապա-
ցուցում է, վոր շրջանային կուսկոմիտեն դեռևս բա-
վարար չափով չի վերակառուցել իր աշխատանքները՝
կուսկազմակերպչական մասսայական-դաստիարակչա-

կան աշխատանքները նոր աստիճանի վրա դնելու տեսակետից, և փաստորեն չի կենսագործել Համկ(բ)Կ ԿԿ 1931 թ. հոկտ. 31-ի վորոշումը՝ կուսակցական ընկերների քաղաքական-գաղափարական կոփածությունը բարձրացնելու մասին:

Յեղեկով այս բոլորից՝ ԿԿ քարտուղարությունը վորոշում է:

1. Կուսակցական դաստիարակչական աշխատանքները ձախողելու և չգլխավորելու համար հանդիմանություն անել Վաղարշապատի շրջկոմի բյուրոյին:

2. Նկատողություն անել ագիտբաժնի վ. Հարությունյանին՝ կուսդաստիարակչական գործին անպատասխանատու վերաբերմունք ցույց տալու և շրջանի քաղդաստիարակչական աշխատանքները ձախողելու համար:

3. Առաջարկել շրջկոմին՝ մինչև հունիսի 20-ը լուսցանցում հատուկ մշակման և ուսումնասիրման յենթարկելու ընկ. Ստալինի յերկու նամակները՝ կապված իդեոլոգիական պայքարի խնդիրների հետ:

4. Առաջարկել շրջկոմին՝ կտրուկ միջոցներ ձեռք առնել ամենակարճ ժամանակամիջոցում վերջերս սկսված աշխատանքները խորացնելու, բոլոր մնացած գլուղերում ևս վերակառուցելու կուսլուսցանցը, առանձնահատուկ ուշադրություն դարձնելով կուսթեկնածուների լրիվ ընգրկման վրա:

5. Առաջարկել կուսպրոպագանդին՝ մինչև հունիսի 20-ը շրջան ուղարկել կուսպրոպագանդի:

6. Առաջարկել կուսպրոպագանդին՝ 3 հոգուց բաղ-

կացած մի պրոպագանդա ուղարկել շրջկոմի տրամադրության տակ՝ ամառվա ամիսների ընթացքում պրոպագանդի գծով ոգտագործելու համար:

7. Առաջարկել շրջկոմին՝ շրջակտիվի համար կազմակերպել մարքսիզմ-լենինիզմի խմբակ: Կուսպրոպին՝ ապահովել խմբակը համապատասխան ծրագրով և գրականությամբ:

8. Հեռակա կուսուսուցումը ծավալելու և այդ աշխատանքները կարգավորելու համար՝ սեկտորավար ընկ. Ս. Բուդույանին 15 որով գործուղել Վաղարշապատի շրջանը:

9. Առաջարկել «Բամբակի համար» թերթի խմբագրությանը՝ այսուհետև ավելի լայն կերպով լուսաբանել կուսդաստիարակչական աշխատանքների դրվածքն ու խնդիրները:

10. Պրոպագանդիստական կադրերի վորակը և նրանց իդեոլոգիական կոփածությունը բարձրացնելու նպատակով՝ առաջարկել շրջկոմին՝ տաս որը մեկ անգամ կազմակերպել սեմինար պարագմունքներ:

11. Առաջարկել շրջկոմին՝ մինչև հունիսի 20-ը լայն ծավալել ագիտացիոն-պրոպագանդիստական և կուսուր-դաստիարակչական աշխատանքներն ազգակոն փոքրամասնությունների շրջանում՝ կազմակերպելով համապատասխան կուսլուսցանց:

12. Առաջարկել շրջկոմին՝ կտրուկ միջոցներ ձեռք առնել ծավալելու կուսուր-դաստիարակչական, քաղաքական աշխատանքները 3-րդ և 4-րդ խորհանդեսությունների ուս, թուրք և հատկապես գերմանացի աշխատողների մեջ:

13. Նշելով շրջանի ԼԿՅԵՄ քաղցանցի միանգամայն անբավարար վիճակը, կի քարտուղարութիւնն առաջարկում է մինչև հունիսի 20-ը վերակառուցել և սկսել ԼԿՅԵՄ քաղցանցի աշխատանքները, ապահովելով այդ ցանցը կուսակցական դեկավարներով:

14. Առաջարկել կի կուլտպրոպագանդին՝ մինչև հուլիսի 15-ը ստուգել այս վորոշման կատարման ընթացքը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Ընդհանուր բաժին

	Եջ
1. Կուսակցական-կադմակերպչական, դաստիարակչական և մասնայական-քաղաքական աշխատանքի մասին	3
2. Կուսակցութեան շրջկոմերի կադմարհանդչական բաժինները աշխատանքի մասին	17
3. Կուսակադմակերպութիւնների ինֆորմացիոն աշխատանքի զբաղմունքի մասին	21
4. Կուսակցութեան կադրերի մեջ կատարվելիք աշխատանքի մասին	25
5. Կուսակցութեան թեկնածուների մեջ կատարվելիք աշխատանքի մասին	31
6. Կուսակցութեան սոցկազմի և աճման կարգավորման մասին	35
7. Միասնական կուսուր անցկացնելու մասին	41
8. 1931—32 թ. աշնան-ձմեռային կուսակցական ուսուցման արդյունքների և հետագա անելիքների մասին	42
9. Կոմյերիտմութեանն աջակցելու ձեռնարկութիւնների մասին	51
10. Կուսակցական-մասնայական աշխատանքի զրուլթիւնը սպառկրոպերացիայի, ժողմնադի և տնայնագործական կոոպերացիայի ցանցում	57
11. Հի(բ)ի Կենտկոմի բյուրոյի 1932 թ. դեկտ. 29-ի վորոշումը	63

II. Արդյունաբերություն

1. Արդյունաբերական ստորին կուսողակի ստուգատեսի արդյունքների մասին	65
---	----

2. Արտադրութեան մեջ կոմունիստի ավանգարդային դերն ստուգելու ընթացքի մասին	62
3. Կարբիդի գործարանի բջիջի աշխատանքի մասին	72
4. Արթիկի կուսկազմակերպութեան սոցկազմի և աճման կարգավորման մասին	75
	79

III. Տրանսպորտ

1. Լենինականի դեպոյի մասին	83
----------------------------	----

IV. Առխաւանքի գլուղում

1. Հենակետային բջիջներ կազմակերպելու աշխատանքներում Ալլանդերգու շրջկոմի կատարած սխալների մասին	87
2. Վաղարշապատի շրջանի կուսկուսակցութեան դրութեան մասին	89



Տեխնիկական խմբագիր՝ Մ. Եփրիկ
 Սրբագրիչ՝ Ա. Տեր-Մկրտչյան
 Հանձնված է արտագրութեան՝ 23 հունվարի 1933 թ.
 Ստորագրված է տպագրելու՝ 10 մարտի 1933 թ.
 Տիրած 3000, Հրատ. № 69, 152.000 տպ. նշ.
 Պետհրատի տպարան. Պատվեր № 209. Գլավիտ № 7702 (P)

ՀՀ Ազգային գրադարան



NL0977073

Գիրք 80 Կ.

1233

1

3171

Справочник парработника

Издательство ЦККП (6) А
Партиздат, Ереван 1982